

Բաժանորդագիրն կԱՆԻԻԿ՝ Թուրքիոյ համար տարեկան 50 դր2, Ռուսիոյ համար 50 րուպ- լի, ուրիշ երկրներու համար 72 ֆր: Վեցամսեայ եւ եռամսեայ բաժանորդա- գրութիւնք եւս կ'ընդունուին: Գաւառներէն դրամի տեղ (սմանեան նա- մակադրոշմ կ'ընդունուի: Եւրոպայի վերաբերեալ ամէն գործի համար դիմել

Առ Տնօրէն-Հրատարակիչ ՅՈՎՆԱՆ Գ. ՓԱԼԱԿԱՇԻԱՆ Պոլիս, Պանդե-Գարոս, Թաշ Խան, Թիւ 50

ԾԱԶԻԿ

ՀԱՐԱԳԻՐ

درعليه ده بنچه قوسنده طاش خاندۀ
ه. نومروده «زاغيك» غزتهسى مديرى
بالاقاشيان جوجانان

S'adresser à

HOVNAN PALACACHIAN
Directeur du journal arménien «Dzaghik»
Rue Bahtché-Kapou, Tach Han, 50
CONSTANTINOPLE

40 Փարա

Ազգային, Քաղաքական եւ Գրական

40 Փարա

ՆՈՐ ԵՐԶԱՆ — Բ. ՏԱՐԻ. ԹԻԻ 47

ՇԱԲԱԹ

24 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1892

ՇԱԲԱԹԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

Կանաչ սեղանին վրայ դրած եմք դարձեալ լեզուի խնդիրը, որուն շուրջը բոլորուած կը խօսինք, կը վիճինք, կը վճռենք, մերթ ծանր, մեղմ, այլ յա- ճախ յանդուգն, կրքոտ եւ յուզեալ:

Այս անգամ գրաբարի հետ ուղղակի գործ չունինք, սեղանին վրայինը միայն աշխարհաբարն է:

Եթէ դիպուածաւ մէկը երեսը ետ դարձնէ վէճի սեղանէն, անտարակոյս պիտի տեսնէ շատ մը հետաքրքիր դէմ- քեր, դիտող աչեր, որոնք իրենց լռին չրթներուն վրայ սա հարցումն ունին. արդեօք դուք ամենիդ ալ լեզուա՞գետներ, լեզուա՞բաններ եք:

Եւ ստուգիւ իրենց իրաւունքն է այս հարցումն ընելու:

Եթէ այսօր այդ խօսողներն հրապա- րակաւ, լեզուական լուրջ խնդրոյ մը վրայ, չլինէին մեզ ծանօթ անձնաւո- րութիւններ, անհանգիստ պիտի լինէ- ինք վայրկեան մը առաջ ճանչնալու գի- րենք, իմանալու իրենց գիտութեան չափը, մտաւոր կարողութիւնը, կրթու- թեան աստիճանը, եւն:

Բայց թողու՛մք այդ կէտը առայժմ եւ դառնամք մեր գործին, ու ըսեմք մի- անգամ ընդ միշտ թէ նոր սերունդը կատարեալ համոզում գոյացուցած է, որ ինչպէս ամէն ինչ յառաջ կ'ընթանայ ան- ջնդհատ, կարե՞լի է որ գրականութիւ- նը, լեզուն իւր հին տեղը մնայ ան- չարժ, կամ ի՞նչպէս նորանոր պահանջ- մանց լիովին գոհացումն չը տայ:

Լեզուի խնդրոյն մէջ ժողովուրդը իւր մեծ դերն ունի: Լեզուն ժողովուրդի բերնին մէջ կենդանի է: Մէն մի անհատ իրաւունք ունի բառեր գտնել, բար- դութիւններ ընել իւր միտքն, զգացու- մը, ամէն ինչ կարենալ բացատրելու հա- մար: Գրագիտին պարտքն է լաւն ընտ- րել, սխալը նետել, անգործածելին՝ թո- ղուլ:

Այժմ մեր լեզուն միայն գրագիտաց, մատենագիրներու ձեռամբ շինուած լի- նէր. տարակոյս չկայ թէ, մեր գլուխն ետ դարձնելով, ուրիշ յետամնաց ազգ- մը, յեղ մը չպիտի տեսնէինք մեր ետին: Միթէ աշխարհաբարին ալ, եթէ կա- րենանք հաւաքել լաւ կերպով, բոլոր գա- ռաւական լեզուաց միտքը, նրբու- թիւնները, երանգները, ոճերու ճոխու- թիւնը, ասացուածներու հարստութիւ- նը չե՞մք պարտիր Հայ ժողովուրդին, եւ ուրիշ ի՞նչ մեծ ապացոյց կարելի է գտն- անք թէ լեզուին ատէրը ժողովուրդը մի- այն եղած է:

Որչափ ստոյգ է այս, նոյնչափ ստոյգ է թէ երբեք խօսուած լեզուն չեն գրեր: Գիտնականաց ակումբներ կը գտնեն, կը մաքրեն, կը ճշդեն լեզուն, գրագէտը կը հետեւի ընտրեալ լեզուի մը՝ միշտ ազ- նուացնելով զայն: Եւրոպայի մայրաքա- ղաքներն իսկ իւրեանց գաւառաբար- բառն ունին. գրական լեզուն միայն դա- սախօսութեանց, աստեղաբանութեանց, ի մի բան, պաշտօնական վայրերու հա- մար յատկացուած է:

Նրբ ժողովուրդին խօսած լեզուն գը- րական լեզուի մը վերածելու հարկն ըս- տիպողական է, անտարակոյս այդ գոր- ծողութեան ձեռնամուխ եղողներն ալ պահանջուած ձեռնհասութիւնն ունե- նալու են, եւ ահա՛ բուն բանախօսին այս կէտին վրայ է հիներու եւ նորերու մէջ, կամ գրաբարեաններու ու աշխար- հաբարեաններու մէջ:

Նորերէն ոմանք իրաւունք չունին անտեղի նկատել այդ դիտողութիւնը, եթէ անարժէք իսկ լինի ծերունոյ մը դի- տողութիւններն, եւ եթէ նուազ վայելուչ լեզուաւ գրուած է, պէտք չեմք քննա- դատութեան մը մէջ նորա օրինակին հետեւիլ, իւր անձը մեզ նիւթ ընել, շեղիլ բուն խնդրէն, ու իրեն դարձնել իւր խօսքերն, այնպիսի խօսքեր զորս ողջամիտի մը գրիչը գծելու չէ. իրա- ւունքը մեր կողմը լինելով հանդերձ,

մտածելու եմք թէ մեր դիմացը եղողը ծեր մ'է:

Եթէ ոմանք կը կարծեն թէ աշխար- հաբար լեզուն բոլորովին անշատ լեզու մ'է գրաբարէն, ինքնածին, ինքնա- րուխ, բնական է թէ Հարաշար կը սը- խալին, բայց այն չենթադրեր թէ հարկ է փոխառութիւն ընել վարկաբարձի այդ մայր աղբիւրէն. ընդհակառակն շատ զգուշութեամբ պէտք է դիմել ա- նոր, ինչպէս տաճկերէնի կամ գաղղի- երէնի: Անտեղի է, եւ բոլորովին մեր լեզուի ոգւոյն հակառակ է մոցնել աշ- խարհաբարի մէջ տաճկերէն, գաղղիերէն ո՛ր եւ է՝ ոճ, ասացուած, որոյ համար մեծապէս քննադատելի են մեր նոր գը- րողներէ ոմանք:

Ի՞նչ կը հասկնայ Հայ մը, եթէ ըսեմ. «այս տղան կը խոստանայ (գաղ.) — երե- ւոյթները փրկել (գաղ.) — քովմարտիկ — քլաքել» — Մենք կ'ըսեմք՝ ականջ դնել, եւ ոչ ականջ կախել, որ ճիշդ տաճկերէնի թարգմանութիւնն է. եթէ երկու ձե- ւերն ալ պիտի ընդունիր իբր հարըս- տութիւն լեզուական, ինչո՞ւ գո՞հ մնամք «աւելցնել» ու մէկգի նետենք «յաւե- լուլ»ը. չգիտեմ թէ Ֆրեդրիքսն է՞ ֆէնտի պիտի կրնայ միշտ «աւելցնել» գործա- ծել ուր որ միայն «յաւելուլ»ը կը բանի:

Ահա՛ վերջապէս լեզուի խնդիրն հոն հասած է, որու մէկ ծայրէն բռնողը կ'առնու, կ'երթայ, բայց ո՞ւր... Աստ- ուած գիտէ: Չգիտեմ թէ ապագայ սերունդը ի՞նչ դատաստան պիտի ընէ այս մասին:

ԱՐՇԱԽԻՐ

ՄԵԼԵՐՍԵՐԵՆ ԵՊԻՍՏՈՍ ՄՈՒՐԵՏԵՆՆ

ՀՈՎՆԱՆ ՓԱԿԱՇԻԱՆ
ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ
ԳԻՃ 10 ՂՐԶ:

Շ Ա Ր

Հ Ա Յ Կ Ե Ն Ս Ս Ա Գ Ր Ո Ւ Թ Ե Ա Ն Յ

Ժ.

ԳԻՐԱՊԵՏԻ—ՄԱՐԳԱՐ

(Շար. նախորդ թիւէն)

Սուչաւայի ազգայիններէն Մարգարայ յաճախորդը կը յիշուի նաև Բրուկզուլեան մը, որ տոհմային մեծահամբաւ գերդաստան մը կը կազմէ անդ, և որոյ անդամոց մէջ կը գտնուին Աւստրիոյ Ասպետութեան աստիճան և Պարոնութեան տիտղոս ստացող գիւղերու տէր համակրելի և ազնիւ անձնաւորութիւններ, որոնք իրենց քաղաքին մեծամեծ ծառայութիւններ մատուցած, եկեղեցեաց պայծառութեան աշխատած, և անդամակից եղած են զանազան ընկերութեանց:

Բժիշկ Անդրէաս Բորովիչ՝ Մարգարայ մօտիկ բարեկամն՝ որ Սուչաւայի Բորովիչներու ցեղին կը պատկանի, ի Կ. Պօլիս հաստատուած և տպագրել տուած էր իւր յօրինած ԱՐՈՒԵՍՏ ԵՐԿՍՅՆԱԿՆՅՈՒԹՅԱՆ օգտակար աշխատասիրութիւնը:

Սուչաւայի Հայք՝ Աւստրիոյ, Հունգարիոյ և Ռումանիոյ մէջ նոյն իսկ օտարացած Հայերէն կը յարգուին ու կը գովուին մեծապէս, անոր համար որ աւանդապահ ու նախանձախնդիր են իրենց նախնեաց կրօնին ու լեզուին:

Սուչովա ունեցած է բազմաթիւ Հայ եկեղեցիներ, բայց այժմ կը յիշուին հետեւեալք. Ս. Խաչ՝ որ ի հնումն փայտաշէն էր, իսկ 1524 ին նորոգ շինուած է քարովիր՝ ծախիւք Խաչիկ-Հանգո անուն ազգայնոյն:

Տանուազ և իւր ընկերն, որոց համար կ'աւանդուի թէ եղնավաճառ էին, որ մը Սուչաւայի մօտ ընդարձակ դաշտի մը բլրակին վրայ նստած՝ կ'ուխտեն, որ եթէ իրենց գործն յաջողի՝ վաճառք մը չիւնեն, Կը յաջողին հարստանալ և նոյն տեղը գնելով՝ վաճառք մը կը կառուցանեն Հաճկատար Ս. Աստուածածին անուամբ, որ մեծ ուխտատեղի է մինչև ցայսօր:

Կան նաև Ս. ՕԳՍԷՆՏ և Ս. ՍԻՄԵՕՆ եկեղեցիները, որոց առաջինը շինուած է 1551ին՝ ծախիւք Ակորչին վարդան ազգայնոյն, որոյ ընտանիքը գաղթած է յետոյ ի Լեմպերկ:

Ակորչինի գերեզմանը Ս. Օգոսէնո եկեղեցւոյն մէջ է. Տաճարաշէն բարերարին տապանադրին սկզբնական տողերն են.

«Այս է տապան Ակորչին

Որ է ձրգի Ամիրային,

Սա է շինող սուրբ տաճարին,

Հանգեաւ Հայոց ՌՄԱ ին (=1602)

ԿԱ էր աւելին, Օգոստոսի Ժ. »:

Իսկ Ս. Սիմէօն եկեղեցին շինած է 1600ին Սիմէօն անուն Հայ մը: Այս եկեղեցի՝ Կարմիր-Աղտարակ կը կոչուէր՝ զանգակատան կարմիր լինելուն պատճառաւ:

Թէ՛ սոյն եկեղեցեաց և թէ՛ Հունգարիոյ, Կեռայի, Նդիսարէթէտի, Լեհաստանի, Լեմպերկի Հայ պապական եկեղեցեաց մէջ դեռ կը տեսնուին Շարականներ(1), որ Մարգարայ վաճառածներն են:

Կ'իմանամք թէ Հունգարիոյ և Լեհաստանի Հայ եկեղեցեաց մէջ կ'երգուին Հայ Շարականները և Ս. Պատարագի արարողութիւնը կը լինին Հայ լեզուաւ:

Կեռայի մէջ Հայ մը օրքսդրի յարմարեցած է պատարագի խորհուրդն:

Նոյն տեղի Պապական Հայք դեռ պահած են Հայկական հիւրասիրութիւնը, և կը սիրեն ու շատ կը յարգեն բուն Հայերն: Կը կարծեն թէ՛ միայն իրենք մընացած են Հայ, և շատ կը զարմանան ու չեն ուզեր հաւատալ երբ կ'իմանան թէ՛ Պոլսոյ մէջ 80 բժիշկ, 75 փաս-

(1) Շարականը առաջին անգամ 1664 ին յԱմսդերտամ տպուած է Ոսկան վարդապետի նախաձեռնութեամբ:

Յետոյ տպագրուած է 1685ին յԱմսդերտամ Մատթէոս Վանանդեցւոյ արդեամբ:

Երրորդ օրինակ մը՝ 1702 ին ի լոյս ընծայած է Թովմաս Եպիսկոպոսն, ընկերակցութեամբ Մատթէոս, Սիմօն և Ղուկաս տպարանական գործակալաց:

Այլ տպագրութիւն մը յԱմսդերտամ ի թուոյն Քրիստոսի ՌՈՂԲ. և ի Հայոց ՌՃԽԱ, ի հայրապետութեան Նդեսացի Նահապետ կաթողիկոսի:

1718ին ևս, Ահմատանցի Աստուածատուր կաթողիկոսի օրով յԱմսդերտամ տպուած է:

Ասոնցմէ զատ՝ անդրաստահման տըպուած ուրիշ օրինակներ ալ կը գտնուին:

Իսկ ի Կ. Պօլիս 1727 ի տպագրութեանց ետքը, հետզհետէ տպագրուած են՝ 1736ին Սեբաստացի ծաղկարար երկու եղբարց՝ տիրացու Բարսեղի և տիրացու Յակոբի նորակազմ տպարանին մէջ:

1742ին հրատարակուած է Մահտեսի Աստուածատուրի տպարանէն:

1768ին «Ի տպարանի տիրացու Յօհաննիսի և տիրացու Յակօբու »:

1784ին Պետրոսեան Ստեփաննոսի գործարանէն ի լոյս եկած է:

1790ին ի տպարանի Յօհաննիսի և Պօղոսի:

Իսկ 1802ին, ի տպարանի Յովհաննիսեան Պօղոսի:

Ասոնց ամէն տեսակ տիպերէն բազմաթիւ օրինակներ կը գտնուէին Մարգարայ գրատունը և կը վաճառուէին ոչ միայն եկեղեցեաց համար, այլ և տուններու մէջ գործածուելու ու երգուելու համար:

տարան, և բազմաթիւ վաճառական ու արհեստաւոր Հայեր կան:

Նոյն տեղի կրօնաւորի Հայոց սովորական եղած է զանգատիլ առաջին պատահած Հայուն թէ՛՝ «մենք 23 տարիներ ո'չ հաղորդուեցանք, ո'չ մկրտեցինք մեր զաւակները, և մեր մեռելները թոյլ չտուին թաղել կրօնական արարողութեամբ՝ մինչև որ Պապը չճանչցանք», եւ:

Յաւալի է որ ժամանակին Օսմանեան մեծագոր Սուլթանաց միջամտութիւնը չէ խնդրուած Հայ Պատրիարքաց կողմանէ, և անհոգ կերպիւ թոյլ տրուած է որ Նիկոլ՝ բուն կրօնաւորսէ այն Հայերը, որք 'ի զո'ր յուսացած կամ ըսպասած են իրենց կրօնակցաց օգնութիւնը. այն Հայերն՝ որք նշանաւոր էին հարստութեամբ:

Կրնամք յիշել այս առթիւ Լեմպերկի Խաչատուր Աւետիք Պեռնաթովիչ, որ 1671ին վախճանած է, 300.000 տուքադի նոյն ժամանակի պատկառելի գումարն փոխ տուած է Լեհաստանի վլա-տեսուալ Գ. Թագաւորին:

Գաղթական Հայք՝ այս երկիրներու մէջ նշանաւոր եղած են թէ՛ հարստութեամբ և թէ՛ երկրին մատուցած ծառայութեամբ, և մինչև իսկ այսօր՝ Բէշտայի Մաճառաց ազգային ժողովոյն մէջ՝ նշանաւոր Հայ երեսփոխաններ կան, և մինչև իսկ նախարարներ: Կեռայի և Նիդարէթէտի Հայաքաղաքաց մէջ ալ քաղաքապետք Հայ են:

Ինչպէս ի Հունգարիա, նոյնպէս ի Ռումանիա(1) կը գտնուին նշանաւոր ազ-

(1) Այժմ 'ի Ռումանիա այլ և այլ քաղաքաց մէջ 1000ի մօտ ընտանիք հազիւ կը գտնուին, զոր օրինակ 'ի Ֆօքշան՝ 150, 'ի Պուքրէշ՝ 200, 'ի Պօթուշան՝ 200, Եաշ՝ 50, ('ի հնումն՝ 400), 'ի Ռօման՝ 60, 'ի Կալաշ՝ 30, 'ի Պալաշ՝ 30, 'ի Թրիօքնա՝ 50, 'ի Պաքով՝ 20, իսկ Ռումանիոյ սահմանակից և Աւստրիոյ վերաբերող Սուչաւայի մէջ՝ 80 ընտանիք կը գտնուին: մնացեալներն Ռումանիան գիւղօրէից մէջ տարածուած են ցիր ու ցան:

Ամէն Հայաբնակ քաղաք՝ ունի իւր եկեղեցին, մէկ կամ երկու քահանայ, և մէկ երկու դպիր, որք 100-200 Քրիստոնեական կ'առնուն:

Իսկ 'ի Սուչաւայ՝ չորս եկեղեցի ունիմք, 'ի Ֆօքշան՝ երեք, և 'ի Պօթուշան՝ երկու, որ չորս քահանայով կը մատակարարուին: Պօթուշանի մէջ՝ ուրիշ տեղերէ աւելի անտարապա պահուած են ազգային լեզուն և հայկական նախնաւանդ սովորութիւնք:

Ազգային վարժարանաց թիւն 'ի Ռումանիա՝ այժմ հինգ են, 'ի Ֆօքշան, 'ի Պուքրէշ, 'ի Սուչաւա, 'ի Ռօման, 'ի Պօթուշան՝ աղջկանց համար միայն: Կային ուրիշ Հայ վարժարանք ալ, որ այժմ փակուած են:

Այս հինգ քաղաքի վարժարանաց երեքին երկուսն ուսանողներն՝ հազիւ թէ

գայինք, որք պատիւ կը բերէն Հայութեան:

Երանի թէ, ընդարձակ Օրացուցին մէջ գետեղուէին բոլոր երկրաց Հայ պաշտօնէից անուններն, ինչպէս կը գրուին Պարսկաստանի, Ռուսաստանի և Օսմ. կայսրութեան մէջ գտնուողներունը:

Կուտինացի Հինտոզլու Յարութիւն վարժապետը՝ որ Աւստրիոյ մայրաքաղաքին մէջ տաճկաբան դասատու էր, Մարգարին սիրելին էր:

Սոյն Յարութիւն վարժապետ երկասիրած է ՔերԱԿԱՆՈՒԹԻԻՆ ԳԵՐՄԱՆՍԻ ԲԱՐԱՌՈՅ, որ տպագրուած է 1830ին՝ ի վեներտիկ, արգեամբք և ծախիւք պարոն Ստեփանի Բումպիկեան Բուստուխեցոյ վաճառականի ի Ֆօքլան:

Հինտոզլուն ունի նաև Ֆրանսերէն-Տաճկերէն բառարան մը տպեալ ի վիճենա:

Ինչպէս Աւստրիոյ համար Սուլալան՝ Հայ լեզուի և կրօնի նախանձախնդիր ու պահպանողն է, նոյնպէս ի Ռուսանիա՝ միայն Ֆօքլանն է, որոյ դպրոցներն նորոգ կառուցուած են, և Պօլէն յատուկ դասատուներ և վարժուհի տարուած են հայերէն լեզուի նոր մշտմ տալու համար:

Գովելի են այս մասին Պ. Ֆէհրատ Ֆէհրատեանի և Յակոբ Մարի աշխատութիւնները:

Նշանաւոր Մանուկ Պէյ Միրզայեան(1)

10-20 ցանցաւ թիւ մը կը կազմեն միայն Պուքրէշի և Ռուսանի հայ վարժարանաց մէջ 150ի մօտ՝ Հայ, Ռուսէն և Հրեայ ուսանողներ կան:

Վիճակագրութիւնը ցոյց կուտայ որ բոլոր Ռուսանիոյ Հայ վարժարանաց մէջ 100 Հայ ուսանող կը կրթուին. մնացեալ մատաղատուններն ո՞ր կը յաճախեն. աներկրայ եղիք, որ տեղական օտար վարժարանները կ'երթան գունդագունդ, և որոց վրայ մտածողներ չկան:

(1) Մանուկ պէյ ծնած է ի Ռուստուգ 1769ին. իւր հայրն՝ Մարտիրոս, որդի էր բնիկ Կարսեցի Յոր անուն ազգայնոյ մը:

Մանուկ պէյ՝ մինչև տասը տարեկան հասակը՝ իւր տանը մէջ կ'ուսնի իւր մայրենի լեզուն, յորմէ վերջ կը մեկնի Եաշ և կը մտնէ հոչակաւոր Հայ վաճառականի մը քով. Ապա ի Պօթուշան խանութպան լինելով՝ բաւական դրամ կը շահի և քաջապէս կը վարժուի Ռուսականերէնի:

1785ին ի Ռուստուգ իւր տունը կը վերադառնայ, ուր 16 տարեկան հասակին մէջ կ'ամուսնանայ:

Մանուկ պէյ՝ զանազան տօնավաճառներու մէջ բամբակի առևտուր ընելով, մեծապէս կը հարստանայ, և Պօլիս գալով, յարաբերութիւն կը հաստատէ պետական բարձր անձնաւորութեանց հետ:

ևս Մարգարայ անծանօթ չէր, ինչպէս Ֆիլիպէի մէջ՝ երևելի ու մեծահարուստ Դաւիթ աղան ալ Մարգարի մարդն էր:

Իսկ Վառնացի լեզուագէտ Մարուգէ վարժապետ մահտեսի Պողոսեան, որ Փէշտըմալճեան Գրիգոր պատուելիի յառաջադէմ աշակերտներէն էր, ոչ նուազ բարեբարուած էր Մարգարայ բարոյական պաշտպանութենէն:

Մարուգէ վարժապետ՝ թողած ձեռագիր երկասիրութիւններէն զատ, ի նուէր ուսումնասեր մանկուոյ ազգիս՝ Արապեան տպարանէն ի լոյս ընծայած է 1842ին ԵՂԵՐԵՐԳՈՒԹԻՒՆՔ ՉԱՐՉԱՐԱՆԱՅ ԻՍՐԱՅԷԼԱՅԻՈՅ տաղաչափութիւնը, և 1843ին ալ տպած է՝ իւր աշխատասիրած ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅԱԿԱՆ անուն ընտիր դասագիրքը:

(Շարունակելի) Ա. Յ. ԱՅՎԱԶԵԱՆ

ԽՕՍԱԿՅՈՒԹԻՒՆ

ՕՐԻՈՐԴԱՅ ՀԵՏ

Լրագրաց ընթերցողք և ընթերցողուհիք սովորութիւն ըրած են, հրատարակեալ յօդուածները կարդալէ առաջ՝ զննելու զայնս գլուխէն մինչև ոտը: Վերնագիր ու ստորագրութիւն, ասոնք են որ յաճախ կարդացուելու արժանի կամ անարժան կը կացուցանեն յօդուածը: Անհրապոյր վերնագիր և անծանօթ կամ անհաճոյ ստորագրութիւն մը յաճախ զանց ընել կուտան յօդուածին ընթերցումը, որքան ալ իմաստալից և հրահանգիչ լինի այն. ընդհակառակն,

Մանուկ պէյ՝ մեծանուն Շքօտրալը Պայրագտար Մուսթաֆա Փաշային սեղանաւորն եղած է. ինքը ճարպիկ մարդ էր և գիտէր մօտակայ ապագայի մէջ արժէքիւն բարձրանալիք ապրանքները, որով կարևոր միջոցներ գնած է. առիթ չէր փախցնելու նաև շահեկան ճամբորդութիւններ ընել, ինչպէս քանիցս գնացած է ի Դանովա, ի Պուքրէշ և այլ քաղաքներ, ինչպէս և ի Ռուսաստան ուր մեծ պատիւներ ստացաւ Աղեքսանդր Ե. Չարէն:

Մանուկ պէյ՝ Դանովայի մետաքսի մեղալաճառութիւնն առած էր:

Վալաքիոյ Իփոլիանթի պէյն ալ խիստ համակրած լինելով Մանուկ պէյին, բարձրագոյն պաշտօններ տուած է նաև, որով ի Վալաքիա ալ ընդարձակ ու հարուստ կալուածներու տէր եղած էր Միրզայեան:

Մանուկ պէյի հաւատարիմ պաշտօնեայն եղած է Պապիկ-Ալվազը, որ ծառայած է նաև Շքօտրալը Մուսթաֆա Փաշային:

Մերզայեան մեռած է ի Պեսարապիա 1847ին:

Քանի՛ քանի՛ անգամներ պատահած է ամենուս ալ յղասալափ լինիլ, ծանօթ անձնաւորութեան մը շողջողուն վերտառութեամբ հրապարակ նետած մէկ գրութիւնը տեսնելով, պարունակութեան վերահասու լինելու տենդոտ անհամբերութեամբ կարդալու ձեռնարկելով, և սպա ափսոսալով այդ ընթերցանութեան համար վատնուած ժամանակը:

Եւ յետոյ, որչափ ընթերցողներ ու ընթերցողուհիներ կան — և դժբաղդաբար այսպիսիք մեծամասնութիւնը կը կազմեն ընթերցողաց և ընթերցողուհեաց — որոնք, զուրկ լինելով իրենց կարդացածին վրայ խորհրդածելու և իրենց սեպհական խելքով դատելու և եզրակացութեան մը յանգելու կարողութենէն, կ'ընդունին յօդուածին արտայայտած գաղափարները՝ երբ ծանօթ են ստորագրողին և համարում ունին անոր վրայ, իսկ երբ անհամակիր են ստորագրողին, որչափ ալ գնահատելի պարունակութիւն ունենայ յօդուածը, անպատճառ պէտք է մերժեն անոր արտայայտած գաղափարները, և արդէն կը կարդան զայն՝ միմիայն մերժելու դիտանքով: Եւ յաճախ կարդալն իսկ աւելորդ կը համարին. ստորագրութիւնը կը բաւէ վճռել տալու համար իրենց թէ յօդուածը բան մը չարժեք:

Այսպէս և դուք, ազնիւ օրիորդք, Ծաղիկի այս երեսին մէջ տեսնելով այսօր սոյն Խօսակցութիւնը (Օրիորդաց հետ վերնագիրը, կ'երևակայեմ որ ձեր առաջին գործը պիտի լինի դէպի յօդուածին ստորոտը խոնարհեցնել ձեր աչքին՝ ձեր խօսակցին ո՞վ լինելն իմանալու համար: Տարակոյս չունիմ որ ձեզմէ շատեր — այսինքն ձեր մէջէն չարածինները — եթէ յաջողին իմանալ ո՞վ լինելս, փոխանակ յուզուած խնդրոց, արտայայտուած գաղափարաց վրայ ըւրջ կերպով խօսակից լինելու հետո, պիտի բաւականանան բամբասանաց առարկայ ընելով անձն: Եւ սակայն ես ալ, ոչ նուազ չտրամադի, ահաւաստիկ կանխաւ կը զրկեմ զիրենք այդ արտառոց հաճոյքէն՝ իրենցմէ պարտկելով ո՞վ լինելս: Այս նպատակաւ է որ Երանուհի անուանս չեմ կցած մականունս և ոչ ալ քնակութեան տեղիս, և ապահով եմ որ չպիտի գուշակուիմ, վասն զի նախ՝ Ծաղիկի Խմբագրին գաղտնապահութեան վրայ կատարելապէս վստահ եմ, երկրորդ՝ գիտեմ որ Երանուհիներ կամ Երանիկներ չատ կան, ոմանք իսկապէս երանուհի և իրենց մտած տունը երանութիւն, երջանկութիւն բերող, այլ՝ լինելով անուանապէս և ոչ իրապէս երանուհի, հակառակը ներգործող և կամ ապագայ երանութեան յոյսեր տուող

ընդ երկար, սե օր մը գլորելու համար զքեզ խորտակիչ յուսախաբութեան մէջ։ Այսպէս ուրեմն, Երանիկ կայ՝ Երանիկ ալ կայ, ինչպէս Գոհար կայ՝ Գոհար ալ կայ, Ազնիւ կայ՝ Ազնիւ ալ կայ, Մաքրուհի կայ՝ Մաքրուհի ալ կայ, Ծաղիկ կայ՝ Ծաղիկ ալ կայ, Վարդուհի կայ՝ Վարդուհի ալ կայ, եւ, ամենուն ալ իրականը և կեղծը։ Ընեմք նաև ուրեմն, աղջիկ կայ՝ աղջիկ ալ կայ, ինչպէս մարդ կայ՝ մարդ ալ կայ, Կարևորն է՝ զանազանել լաւը վատէն, ճշմարտը՝ կեղծէն։ Կարևորն է գիտնալ՝ չխաբուիլ անունէն, երևոյթէն։

Իսկ իմ ինչ կարգի Երանուհի լինելու, սիրասուն օրիորդք, մի՛ կարծէք թէ պիտի կրնաք անվրէպ դատել իմ գըրելիքներէն։ Արնայ պատահիլ որ սխալիք։ Միթէ մէկէ աւելի չե՞մք կարող համրել հրապարակի վրայ գրողներ ու խօսողներ ուրք բոլորովին հակառակը կը խօսին ու կը գրեն։ Ինչ որ իրենք չեն իսկապէս կամ բոլորովին հակառակն են ու կը գործեն։ Գերասանաց պաշտօնն ինչ է աշխարհի վրայ։ Եւ միթէ թատերաբեմերու վրայ երևցողներն են միայն գերասան։ Ըսել չեմ ուզեր թէ ես ալ գերասանութիւն պիտի ընեմ՝ հրապարակի վրայ։ Նպատակս է խորհուրդ տալ ձեզ որ և է գրուածքի հոգին միայն առնել՝ առանց ամէն անգամ հաւատարմութիւն արտայայտուած ամէն գաղափար, ամէն զգացում՝ անկեղծ ներշնչութիւնն է գրողին։ Այսպէս նաև, Երանուհիս գրածները միայն կարդացէ՛ք։ անձս ձեր ինչուն պէտք։ հաւատացէ՛ք միայն որ ձեր անկեղծ բարեկամն եմ և մեծ հաճոյք պիտի զգամ ժամանակ առ ժամանակ Ծաղիկի միջոցաւ ձեր քաղցր տեսակցութիւնը վայելելու։ ձեզմէ շատերուն ալ անձամբ ծանօթ ու մտերմութիւնն է եմ։ Թերեւս այս պահուս ինձ հետ միասին կ'ընթեռնուք այս խօսակցութիւնը՝ առանց ձեր մտքէն իսկ անցնելու որ կրնամ ես իսկ լինիլ ստորագրող Երանուհիին։ Եւ այս վերջին նախադասութեան հասնելով, օրհնեմ ձեզ ձեր նայիք պիչ պիչ ու զիս կը հարցափորձէք թէ արդեօք ե՞ս եմ։ «Ներանիկ, դուն ե՞ս, աղուորս, չիտակ ըսէ՛»։ Եւ ես պիտի վստահացնեմ զձեզ որ ամենևին ես չեմ։ «Ձէ՛, խուշո, ես ո՞վ, լրագրի մէջ բան գրողն ո՞վ»։ Եւ խօսակից կամ ընթերցակից բարեկամուհիս պիտի մտաբերէ իրեն ծանօթ ուրիշ Երանուհիներ։ Նոյնը պիտի ընեն ուրիշ ընթերցողուհիք։

Այսպէս, այս խօսակցութեան առաջին և անմիջական արդիւնքը պիտի լինի՝ մտքերու մէջ Երանուհիներու փնտրումը, Երանուհեաց աշխարհին մէջ խու-

զարկութիւն։ արդեօք այս ինչն է՞, արդեօք այն ինչն է՞։ Եւ այս առթիւ, որովհետեւ խօսակցութիւնը հրապարակային է և այր մարդիկ ևս ունենալիք են, ո՞վ գիտէ թէ այս առթիւ ի՞նչ քաղցր և կամ ի՞նչ սրտատոչոր յիշատակներ չպիտի զարթնուն ոմանց մըտքերու մէջ, ի լուր այս Երանուհի անունն։ Բայց ամէն վերացումներէ վերջ, ընթերցողք և ընթերցուհիք պիտի սթափին վերջ ի վերջոյ և պիտի անդադառնան Երանուհիս, որ սակայն չուզեր չափէն աւելի շարժրիւլ իւր ընթերցող բարեկամուհիները և մասամբ միայն կը գոհացնէ իրենց հետաքրքրութիւնը, յայտնելով հաւաստի թէ՛ ինքն ալ իրենցմէ շատերուն նման՝ քանի մը տարիներէ ի վեր վարժարանէ մը շրջանաւարտ եղած և տունը նստած աղջիկ մ'է, որ իւր ժամանակը կ'անցունէ տնական առօրեայ գործերով, ասեղնագործութեամբ, կար ու ձեւով, կարդալով և դաշնակ ածելով։ Գրելը միայն պակաս կը մնար...

Գրե՛լ, բայց ի՞նչ յաւանութիւն ինձ նման զեռատի աղջկան մը համար։ Ես ո՞վ, հրապարակի վրայ գրիչ շարժողն ո՞վ։

Այս մտածումը, այս երկչոտութիւնը կ'արգելուր զիս գրիչ ձեռք առնելէ քանի մը տարիներէ ի վեր։ Տնական գործերով և ընթերցանութեամբ պարապելով հանդերձ, գրելու ժամանակ ալ կարելի էր գտնել ինձ, բայց կը պակսէր ձեռնարկելու համարձակութիւնը։ Առ հասարակ ամէն աղջկանց նման՝ ինձ ևս նախապաշարում եղած էր թէ այր մարդոց մենավաճառն է գրական հրապարակը, մանաւանդ չայոցս մէջ։ Մէկ երկու ամիսէ ի վեր միտքս կ'զբաղէր այս խնդրով։ Ինչու մեր տիկնայք և օրիորդք — ուսեանքն անշուշտ — իրենց մասն ու բոլորին չունենան գրականութեան մէջ, ո՞վ կ'արգելու գրիչնք։ Միթէ օտար ազգաց մէջ երևան չե՞ն եկած տիկնայք և օրիորդներ որոնք հոչակաւոր եղած են իրենց գրական երկերով։ Ո՞վ կարող է պնդել թէ չայք եւս առաջնակարգ գրողներ չեն կարող ունենալ մեր սեռէն։ Հրապարակի վրայ իբրեւ գրագէտ երեցող երիտասարդաց չափ և թերեւս աւելի ուսեալ օրիորդներ՝ կը կարծեմ որ մօտիկ վրայ չեն համրուիր այժմ։ Ինչո՞ւ գրեն առաջինք միայն, ու վերջինք՝ առաջնոց գրածները միայն, յաճախ անլի, անհամ, անիմաստ գրութիւնները միայն կարգալու գաղափարաւորած մընան։ Ինչո՞ւ հրապարակի վրայ չերեւին նաև մեր ուսեալ աղջկուհիք։

Այս մտածումներու մէջ էի, երբ Ծաղիկի վերջին մէկ քանի թուոց մէջ երեցան իմ համակրելի բարեկամուհիս, Օր. Նեգինէ Բ. Պալքեանի գրութիւններն։ Իրաւ որ շատ ուրախացայ՝ փա-

փաքներուս համապատասխան գտնելով ազնիւ Օրիորդին այս ձեռնարկը, վասն զի, թէ և գրական աշխարհին մէջ մեր սեռէն կը փայլէին արդէն Տիկնայք Տիւսար բաշա և Զապէլ Տօնէլեան, բայց այդ զոյգը բաւական չէի համարեր։ ուստի Օր. Նեգինէի երևումը ոգևորեց զիս և թելադրեց որ ես ևս գրելու փորձ մ'ընեմ, ոչ թէ գրագէտ հանդիսանալու մըտադրութեամբ — վասն զի գիտակից եմ անկարողութեանս —, այլ որպէս զի իմ կողմանէ օգնեմ Օր. Նեգինէի՝ ինձմէ շատ աւելի կարողները թելադրելու որ չքաշուին, իջնեն հրապարակ և իրենց բաժնին սատարեն գրականութեան զարգացման։

Եւ արդ, քանի որ անգամ մը սկսայ գրել, կը մտադրեմ Ծաղիկի յաջորդ թիւերով խօսակցիլ ձեզ հետ, ուշիմ՝ բարեկամուհիներս, մեր սեռին յատուկ խնդիրներու վրայ։ Ներկայ խօսակցութիւնս կրնաք համարիլ, եթէ բարեհաճիք, իբրեւ յառաջաբան մը յաջորդ խօսակցութեանց։

Ուրեմն ց'տեսութիւն, ազնիւ օրիորդք
Ե Ր Ա Ն Ո Ւ Հ Ի

ԲԵՄԲԵՆԻԿ ԹԷ ԶԵՐԱԽՈՍՈՒԹԻՒՆ

... Խմբագրապետ Տէր։

Մի քանի շաբաթ յառաջ Ծաղիկի Շաբաթական Քրօնիկին նիւթ եղած էր բամբասանքը։ Յօդուածագիրը շատ պոժգալի կը գտնէր Գատըգիւղի մէջ եղող այդ ստուգիւ պոժգալի սովորութիւնը։ Ժամանակէ մը ի վեր Գատըգիւղ կը բռնակիմ, և բնական է որ ինձ տեսութեան համար բարեկամներ ճարեմ։ ատոնք եղան միշտ բերան եկող անձինք, իբր տեղւոյն հանրածանօթներն, սալօնի երիտասարդներն, սրախօսներն (իմա զբոսախօսներ), քալամպուրիսներն, գըրագէտներն, պարի քալալիներն և...

... Խմբագրապետ Տէր։

Ահաւրի տպաւորութիւն մը ունեցայ, երեկոյթի մը մէջ, երբ մի քանի երկտասարգ և երիտասարդներ հաւաքուած, բաժնեք ջանդաւրիս լսելով, իւրաքանչիւրն սկսաւ իւր կարգին... Խմբագրապետ, դեռ աւելին՝ չարախօսել, դեռ աւելին՝ անուանարկել այրեր, կիներ, աղջիկներ, շնորհով ընտանեաց պատկանող անձնաւորութիւններ, որոց տղաներն են գնացած, կերած, խմած, յարգուած, զբօսցած և իրենց իժաթոյն լեզուին ստայօդ կամ չափազանցեալ նիւթեր պատրաստած։ Ահա՛ կարգ մը (ան)ազնուականներու ժամանակ անցընելու եղանակը, լինի դուրսը, զբօսա-

վայրերու մէջ, ներսը՝ տան մէջ, երեկոյթի, հանդիսի մը մէջ, թղթի (գրամով) պահուել, ևն. ևն. Ի՞նչ հարկ վեր բերել մանրամասնութիւնը, այնքան կեղտոտ, այնքան զգուշի :

Առանց այլ ևս տոկալու այս տխուր երևութիւն առջև, կա՛լ զիս հրաժարեալն ըսինք և հեռացանք ի մեծ վիշտ սրտիս :

Կան ազնիւ ընտանիքներ, բայց անգամ մը փորձուելէ վերջ, եթէ կրկին փորձութեան ենթարկուին, տարակոյս չկայ թէ այնուհետև նոցա արգահատիլս պարզապէս ջղային տկարութիւն մը պիտի լինի իմ քով :

Այս վիճակին դարման ասնիւ կարեղի է : Պիտաւոր, խոշոր պէպեքներ կրթելն արդարեւ դժուար է շատ : Ախտո՛ւ. . . :

Գ. Պ.

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

— ԿՈԹՈՂԻԿՈՍՏԿԱՆ ՀՐԱՒԻՐԱԿ կարգուած են Ս. Էջմիածնայ Սինդիկին կողմանէ, ինչպէս լրագիրք հրատարակեցին՝ մասնաւոր նամակներէ իմանալով, Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեան և Ներսէս վարդապետ Հայկազունի :

Ինչպէս մեր ընթերցողք կը յիշեն, Արիստակէս եպիսկոպոս այն եկեղեցականն է որ, ինքն կաթողիկոս ընտրուելու համար, ընտրական գործողութիւններն սկսելէ առաջ՝ Էջմիածնէն ի տար աշխարհ հեռացնել տրուաւ երկու եպիսկոպոսներ, Սինդիկական Սուքիաս եպիսկոպոս Պարզեանցը և Էջմիածնայ գանձապահ Ներսէս եպիսկոպոս Խիւտավէրտեանցը, որոց կացութեան մասին որ և է տեղեկութիւն չկայ այժմ :

— Տ. ՆԵՐՍԷՍ ՊԱՏՐԻԱՐԺԻ մահուան տարեդարձին առթիւ, Ամեն Մեղրիսեցեկ արքեպիսկոպոս Մուրատեանց հրաւիրեալ է յառաջիկայ երկուշաբթի օր Ս Պատարագ մատուցանել Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, ուր ապա հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի :

— Առնալիքի մէջ կ'կարդամք .

« Կիմանանք թէ Ատարազարէ չորս ժամ հեռաւորութիւն ունեցող Նոր Գիւղ անուն հայաբնակ փոքր գիւղին քահանային ձեռքէն եկեղեցւոյն ոյն բանալին առնուած է Նիկոմիդիոյ առաջնորդին հրամանաւ, և թէ եկեղեցին փակ կը մնայ քանի մը շաբաթէ ի վեր : Թէև չենք ուզեր

հաւատալ, սակայն կ'ըսուի թէ ոյն քահանայ այդ եղանակաւ պատժուած է, յիշեն զի Մուրադայցի քանի մը թողարկան ընտանեաց արտօնութիւն տուած էր Նոր Գիւղ գաղթել, թէև ասոնք դեռ չեն կատարած իրենց մտադրութիւնը : »

— Ի Լոյսպիկ (Գերմանիա) այժմ կ'ուսանին եղեր 7 Հայ երիտասարդներ, որոցմէ կը Գէորգեան ձեռնարանէն չըջանաւարտ ելած են :

— Թիֆլիսի Հրատարակչական ընկերութիւնը բոլոր տպագրութեամբ ի լոյս ընծայեր է Խրիմեան Հայրիկի Սիրտք և Սամուելը, Վեհ. Հեղինակի պատկերով :

— Պուլանըխի Պետրոս սարկաւազ Պոլիս գալով, Կրօն. Ժողովէն արտօնութիւն խնդրած էր Պուլանըք երթալ վարդապետական աստիճան տալու համար : Ժողովն որոշեց Մշոյ Առաջնորդարանէն տեղեկութիւն ուղել այդ սարկաւազին նկատմամբ :

— Արմաշու Դպրեվանսը մատակարար Արժ. Ներսէս Ծ. Վարդ. երեքշաբթի մայրաքաղաքս գալով, չորեքշաբթի ներկայ գտնուեցաւ խնամակալութեան նստին և տեղեկութիւններ հաղորդեց իւր պաշտօնի մասին :

— Պ. Ղաղարոս Աղայեանց, որ ինչպէս կը յիշուի՝ անցեալ տարի կաթողիկոսանալու աշխատող Սեդրակեան Արիստակէս եպիսկոպոսի կողմանէ մասնաւոր պաշտօնով մը երուսողէմ « ուխտի » գնաց, ի Թիֆլիս հրատարակեր է տետրակ մը որուն մէջ կը ջանայ եղեր հաստատել թէ Ս. Եռչանիկը թաղուած է ոչ թէ Թիֆլիսի Մետեխ բերդին մէջ, ինչպէս գիտէինք մինչև յարգ, այլ յերուսողէմ, ուր թաղուած է նաև նորա տագրը Զոյիկ :

— Կիլիկիոյ Ամեն Տ. Մկրտիչ Կաթողիկոս հոգևոր պաշտօնէ զրկեր է Մալաթիոյ թեմերէն Տարէնտէի երկու քահանայները :

— Կրօնական Ժողովը 14 տարի առաջ կարգաւորած եղած քահանայ Խարբերդցի երեմիա անուն անձին, որ իւր վիճակին բարեօրոյն խնդրած էր Ժողովէն, առաջարկեց Լիմ կամ Կուսը անապատն երթալ՝ ցկեանս տպաշխարհելու և վերջին թոշակին արժանի լինելու համար, սակայն այդ անձ չընդունելով զայս առաջարկ, Ժողովն որոշեց խնդիրը փակեալ նրկատել :

— Եդեսիայէն Արեւելքին կը գրեն թէ, քաղաքին մօտակայ Կարմունջ գիւղին մէջ գտնուող սակաւաթիւ խղիճականաց ոմանք հետզհետէ դարձեր են Մայրենի եկեղեցին, ոմանք ալ ինչ ինչ առիթներով ցըրտացեր են եղեր իրենց Հովիւէն :

— Քաղաք. Ժողովն վաւերացուց ընտրութիւնն Կէտիկ-Փաշայի Թաղ. Խորհրդոյ երեք անդամոց, որք են Յովհաննէս Էֆ. Կիւլպէնկեան, Սարգիս Էֆ. Խարայեւեան և Եղիա Էֆ. Վէրիբեան :

— Քաղ. Ժողովը մերժեց Բերայի Թաղ. Խորհրդոյ կալուածոց ճիւղին գանձապետ Հալաբարձում Էֆ. Մագպուլեանի հրաժարականը :

— Խասգիւղի Արքանոցին երանուհի Մայրապետը Ուսումն. Խորհրդոյ ներկայացուց՝ նոյն հաստատութեան ուսումնական ծրագիրն ու ժամանակացոյցը :

— Ուսումն. Խորհուրդն որոշեց ուսուցչի վկայական տալ Համլաճեան Աստուածատուր, Վարժապետեան Անդրանիկ ե ճիւղանեան Յարութիւն Էֆէնտիններու :

— Տնտես. Խորհուրդն չորեքշաբթի օր նկատողութեան առնելով Գատը Գիւղի Աղքատախնամ ընկերութեան խնդիրն, որոշեց յաջորդ նստին ի խորհրդակցութիւն հրաւիրել Թաղ. Խորհրդոյ դիւանն :

— Տնտես. Խորհուրդն և կտակաց Հոգաբարձութիւնն չորեքշաբթի օր խառն նիստ կազմելով, նկատողութեան առին Վազֆի դրութեամբ կտակ կամ նուէր ընելու մասին Հոգաբարձութեան կողմանէ ծրագրեալ հրահանգը :

— Եգիպտոսի Գաւառական Ընդհ. Ժողովոյ անդամ ընտրուեր են Գահրէի կողմանէ՝ Վսեմ. Տիգրան փաշա Ապրօ, Վսեմ. Մկրտիչ պէյ, Մարկոսոֆ, Վսեմ. Եռսուֆ պէյ, Մանուկ, Գաբրիէլ Էֆ. Գրիգորեան, Սեդրակ Էֆ. Դաւիթեան, Բարթիկ Էֆ. Նահապետեան և Աղեքսանդր Էֆ. Հոգոցեան : Քուէարկութեան մասնակցեր են 365 ընտրողներէն 256 անձինք : Գահրէէն ընտրելի մնացեալ հինգ անդամոց ընտրութիւնը պիտի կատարուէր անցեալ կիւրակէ օր : արդիւնքը դեռ չէ իմացուած :

— Պարսկաստանի հանդուցեալ առաջնորդ Միսիթարեան Ստեփաննոս

եպիսկոպոսի տեղ թաւրիղ պիտի զըրկուի եղեր՝ Հնդկաստանէն էջմիածին եկած ծերունի խաչատուր վարդապետը :

— Կէմէյիկի վաճառականներէն Մեծ. Յովհաննէս էֆ. Քէօսէեան մէկ օրինակ տարեկան ծաղիկ նուիրեց Կէմէյիկի Պէնլի գիւղին աղջկանց վարժարանին :

— Եէնի-Գարուի թաղ. խորհուրդը վերջնապէս հրաժարած լինելով, Տնտեսական խորհուրդն՝ թաղային մատակարարութիւնն անխնամ չըլծողու համար՝ թաղեցիներէն Պատ. րիարքարանի մէկ քանի պաշտօնեայններէն բաղկացեալ առժամանակեայ թաղ. խորհուրդ մը կազմեց, ցնոր տնօրինութիւն թաղին մատակարարութիւնը կատարելու համար :

— Պարսկական կառավարութիւնն Մոհաքէ և Միեզակում պատուանշանի առաջին աստիճանը նուիրած լինելով Հայաստանութեանց դիւանին Տնօրէն Պաղտատեան վսեմ. Օհան էֆէնտիի, Կայս. իրաւէ մը արտօնած է այդ պատուանշանի գործածութիւնը :

— Այս առաւօտու Սահմանէն կ'իմանա՞նք թէ, Պանտըրմայի քարոզիչ Արթ. Վահան Ծ. վարդ. Յակոբեան իւր պաշտօնավայրն ուղևորեր է :

— Տիգրան էֆ. Բարաղամեան հրաժարեր է Գաղաք. Ժողովոյ անդամակցութենէն՝ իւր զբաղմանց պատճառաւ :

— Պատր. Փոխանորդ Գեր. Գարբիէլ Ծ. վարդ. Ճէվահիրճեան վաղը Սամաթիոյ եկեղեցւոյն մէջ Ս. Պատարագ պիտի մատուցանէ :

— Տաթեւի հռչակաւոր վանքը, որ խարխուղ վիճակի մէջ էր, սկսեց է վերաշինուիլ : Կառուցուել է նոր զանգակատուն և մտադրութիւն կայ եղեր նորոգելու վանքին բոլոր սենեակներն և ամբողջ պարիսպը : Դպրոց մ'ալ պիտի շինուի եղեր շրջակայ Հայ գիւղացւոց համար :

— Թիֆլիզի Ներսիսեան վարժարանին տեսուչ Պ. Յովհաննէս Սպենդիարեան հրաժարեր է իւր պաշտօնէն :

— Մշոյ Մատնավանուց վանահայր Կարապետեան Արթ. Տ. Եղիշէ Ծ. վարդապետին տեղ վանահայր կարգուել է Արթ. Տ. Կարապետ վարդ. Նսայեան :

— Այտընարեան ազգայնոց կրթական վիճակը տխուր գոյնեքով կը նկարագրէ Զմիւռնիայէն թղթակից մը : Այտընի Հայ Ժողովուրդը կը բաղկանայ 45 տունէ :

ունի եկեղեցի մը և վարժարան մը ուր պաշտօն ստանձնող ուսուցիչներէն ոմանք 14, ոմանք 9, ոմանք 7 և ոմանք միայն 4 ամիս կրցած են մնալ : Փափաքելի է որ այդ ուսուցիչք հրապարակաւ ի վեր հանեն այն պատճառներն, որք չեն թոյլ տար ուսուցչի մը՝ երկայն ժամանակ հոն մնալ : Պատճառներն իմացուելով, թերեւս չարիքին դարման մը խորհուրդ :

— Մշոյ առաջնորդ Գեր. Ներսէս Ծ. վարդապետ խարխուղեալ, ըստ որոշման Կեդր. վարչութեան խառն ժողովոյ, Բաղէշ գնացեր է սեպտ. 20ին և վսեմ. Կոստակալին այցելութիւն տուեր է : Ն. Գերապատուութեան նախագահութեամբ առաջնորդական ընտրութիւն կատարուելով, միաձայն հաւանութեամբ Առաջնորդ ընտրուել է Լիմ Անապատի վանահայր Գեր. Պօղոս եպիսկոպոս : Գեր. Ներսէս Ծ. վարդապետ պիտի անցնի հովուական այցելութիւն մը կատարել Մանազկերտի և Պուլանքի կողմերը :

— Փոռնի լրագիրն հոկտ. 18էն սկսեալ անորոշ ժամանակաւ դադարման դատապարտուեցաւ՝ օրինաց հակառակ ընթացքի մը մէջ գտնուելուն համար :

— Բերայի Նոր Թատրոնին վերաշինութեան ձեռնարկուած է : Ճարտարապետն է Յովսէփ Էֆէնտի Ազնաւոր :

— Պ. Ս. Մանգինեանց՝ Երևանի թեմական դպրանոցին տեսչութեան հրաւիրուել է 2000 թուրքի ռոճիկով :

— Թիֆլիսի հայ կանանց բարեգործական ընկերութեան վարչութիւնը մեղ ուղարկել է հետեւեալ գրութիւնը :

« Մեծապատիւ խմբագիր. Թիֆլիսի հայ կանանց բարեգործական ընկերութեան վարչութիւնը սրանով յայտնում է, որ նա պատրաստ է օժանդակութիւն տալ այն անձերին, որոնք կը ցանկան պատրաստուիլ մեր ծխական ուսումնարաններում ուսուցչութիւն անելու համար պահանջուող պետական սահմանեալ վկայագիրը ձեռք բերելու : »

Հրատարակելով սոյն գրութիւնը, ուրախութեամբ ողջունում ենք Հայ կանանց ընկերութեան վարչութեան այդ խելացի և օգտաւէտ որոշումը : Կատարած չկայ, որ շատ հայ չքաւոր ուսուցիչներ երախտապարտ պիտի լինին յիշեալ ընկերութեան՝ նրա այդաւելի քան նպատակայարմար որոշման համար :

(Նոր-Դար)

ՄԻՐԻՃԱՆԵԱՆ ՍԱՆԿԱՊԱՐՑԷՁ

Ե Ի

Ո Ի Ս Ո Ի Մ Ն Ա Ր Ա Ն Ա Ղ Զ Կ Ա Ն Յ

Ի ԿԵՏԻԿ ԲԱՇԱ

Ձգուչացէ՛ք օտար դպրոցներէ՛ որք չեն կարող հայացի կրթութիւն տալ :

Ձգուչացէ՛ք վարդապետ տառտէն՝ որ միշտ անպետ տառտէն է :

Նախընտրեցէ՛ք մերն՝ որ միշտ մերն է, և որ իւր ամէն կատարելութեամբ կը պահանջէ ինչ որ նորա կը պահանջեն : Փութացէ՛ք : (1)

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Իտալիոյ թագաւորը մասնաւոր նամակաւ շնորհակալութիւն յայտնեց է առ Պ. Բառնօ, ֆրանսական նաւատորմին՝ ձենովայի հանդիսից մասնակցելուն համար :

— Ռուսիոյ կայսերական գերդաստանէն ութ անձինք այժմ ի Բարիզ կը գտնուին : Իրենց եղած ընդունելութիւնք խիստ սիրալիր են :

— Ռուսիոյ մէջ մենամարտի դէմ ծանր պատիժներ տնօրինուել են : Եթէ մենամարտողներէն մին մեռնի, մեռցնողին պատիժը պիտի լինի 2-6 տարի բանտարկութիւն : Ծանր կերպիւ վիրաւորողը 3 տարի պիտի բանտարկուի, և եթէ մենամարտ մ'առանց արիւնհեղութեան վերջնայ, մենամարտողը 4-6 ամիս պիտի բանտարկուին :

— Պուլկարիոյ Սօպրանիէն բացուեցաւ անցեալ հինգշաբթի, նախագահութեամբ Ֆէրատնանտ իշխանին :

— Պարսկաստանի մէջ Մոսկուայի Առևտրական Պանքան ճիւղ մը բացաւ :

— Գերմանիոյ կայսերական Պանքան իւր զեղչի սակը 610 35ն 4ի բարձրացուց :

— Ռուսիա օտար երկրաց մէջ ունեցած իւր դրամները ետ կը քաշէ :

— Չիքակոյի մէջ հոկտեմբեր 22ին տօնուել է Արուեստահանդիսի շինուածոց աւարտումը :

— Գերմանիոյ գործարաններէն շատ գործաւորներ կը ճամբուին : Առևտրա-

(1) Օտարամոլութեան յառաջ բերած վնասներն ինքնին կը ցնդին՝ անոնց դէմ մրցելու կարող ուժին հանդէպ : Ժողովուրդը պէտք է գիտնայ գնահատել այսպիսի անձանց անձնուէր ջանքերը : Իւր անմիջական օգուտն ալ այդ գնահատման մէջն է : Միւրիճանեան էֆէնտիի ամէն յաջողութիւն կը մաղթեմք, իւր ձեռնարկը գտնելով գովելի և քաջալերութեան արժանի : Ծ. Խմբ.

կան տաքնապ մը մօտալուտ կը կարծուի :

— Պ. Կլատսքոն անցեալ շաբթու Վի-
րալի երկաթուղւոյն հիմնարկէքը կատա-
րեց , ճամբուն վրայ քիչ մը հող փորելով :

— Ռուսիա 860 000 ռուբլի յատկա-
ցուցեր է՝ Զիքակոյի Սրուեստահանդի-
սին մասնակցելու համար :

— Սիպերիոյ Գուսթանա ամայի մա-
սին մէջ Թուպու գետին ափանց վրայ՝ աշ-
խարհագրութեանց մէջ ցարդ չլիշուած
քաղաք մը կայ եղեր , որ 20.000 բնակիչ,
բազմաթիւ քարուկիր շէնքեր , երեք ե-
կեղեցի և դպրոցներ ունի եղեր :

— Զինու Շէնսի նահանգին Սինկան-
ֆու մայրաքաղաքին մէջ մոլեռանդ ք-
սեպտ. 8/ն ջարդեր են կրողացի և տե-
ղացի քրիստոնեայները :

— Բարիզու մէկ փողոցը Էռնէսթ Ռե-
նանի անուամբ պիտի յորջորջուի :

— Լուստերի հանդէսը երկուշաբթի օր
կատարուեցաւ մեծ շքով բովանդակ Գեր-
մանիոյ մէջ : Ի Վիթէնպէրի , Կայսրն՝
իր պետ Լուտերական եկեղեցւոյն՝ բա-
նախօսութիւն մը պիտի արտասանէ ,
Լուտերի գործին՝ Գերմանիոյ և բողո-
քական աշխարհին համար ունեցած նը-
շանակութեան վրայ :

— Հնդկաստանի զօրաց հրացանները
կը փոխուին բազմահարուածեաններու :

— Վրաստանի Գուսթայի քաղաքին
մէջ հոկտ. 24/ին ահաւելի երկրաշարժ մը
ամէն ինչ աւերեր է : 5 գիւղեր կործա-
նել և 27 անձինք փլատակաց ներքեւ
մնացեր են : Համայն ժողովուրդը ան-
պատսպար մնացած է :

— Ֆրանսայի Երեսփոխանական Ժո-
ղովն առաջին ընթերցմամբ ընդունել է
այն օրինական ծրագիրը , որով գործա-
րանատեսարց և գործաւորաց միջև ծա-
գած ամէն անհամաձայնութիւն իրաւա-
րարութեամբ պիտի կարգադրուի :

— Աւստրո-Հունգարիոյ նոր ոսկեղը-
րամները կը շարունակուին կտրուիլ և
օրը 10.000 հատ 20 քրօնէնոց կը պատ-
րաստուի :

— Պուկարիա դադրեցուցեր է Յոյն
վարժարանաց յատկացուցած նպաստը :

— Միացեալ Նահանգաց Միլուօքի քա-
ղաքին մէջ հրդեհ ճագեցով , ամբողջ թաղ
մը , կաղի գործարանը և Զիքակոյի եր-
կաթուղւոյ աշխատանոցը այրեցան : Վը-
նասը 9 միլիոն տոլար կը հաշուին :

— Սպանիոյ Բոնիթվէտա նահանգին
մէջ ողողմունք կը շարունակեն , մեծ վը-
նասներ պատճառելով :

— Դանուբի վրայ չոգենաւուց երթե-
ւելի արգելուեցաւ , հետախօսի ծաւալման
տեղի չտալու համար :

— Տայէ Կանք դրամատան հաշուա-
կաշնութէն մին 100.000 մարք գողցեր ու
ձերբակալուեր է :

— Աւստրո-Հունգարիոյ մէջ բողոքա-

կանութեան գլխաւոր ձեւերէն մին եղող
Ռէպլէյեանութիւնը կամ Մէթոտակա-
նութիւնը դաւանիլ բացարձակապէս
արգելուեր է :

— Գերման կառավարութիւնն իւր
պաշտպանութեան ներքեւ առեր է Սօ-
ֆիայի մէջ 1882էն ի վեր հաստատուած
գերման վարժարանը :

— Աւստրիոյ եգիպտացորենի հունձքը
չատ լաւ է եղեր :

— Պիզմարք իշխանը հիւանդ է եղեր :

— Միացեալ-Նահանգաց արմտիք այս
տարի չափազանց առատ են , այնպէս որ
երկաթուղւոյ կառքերն ու մթերանոցը
չեն բաւեր զայնս մթերելու :

— Տափմէի մէջ Տօտս գնդապետը Պէ-
հանգէն թագաւորին բանակը բոլորովին
ջախջախելով , Ապովէյ մայրաքաղաքին
տիրացեր է :

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պաշտօնաբաշխութիւնք. — Բաղդապ պէյ՝
Ազրիանուպօլսոյ , Բէֆիք պէյ՝ Այտընի,
և Մուսթաֆա էֆ. Խարբերդի կուսա-
կալութեանց տէֆթէրտար , և Ահմէտ
Արիֆի պէյ՝ Պօրտուրի կառավարիչ
անուանեցան :

Պատուանշանք. — Բարիզու բժիշկնե-
րէն Տօքթ. Պէրթոյի և դեղագործներէն
Պ. Խաչիկի Հիւնքեարպէյէնտեանի (Լա-
քրուա) Դ. Կարգի Մէճիտիյէ պատուա-
նշան տրուեր է :

— Համտի պէյ՝ տնօրէն կայս թան-
գարանին՝ Զմիւռնիոյ մօտերը պեղում-
ներ կատարելով , 80 սնտուկ ծանրագին
հնութիւններ գտած ու ճամբայ հանե-
լով մայրաքաղաքս դարձած է :

— Կարին կը զրկուին թնդանօթ շի-
նող երկու Գերմանացիներ որք Կայս.
կառավարութեան ծառայութեան մէջ
մտած են :

— Անատոլիոյ երկաթուղեաց արտօ-
նատէրը Գօնեա - Էսկիչէհի - Կեսարիա
երկաթուղւոյ գծին շինութեան արտօ-
նութիւնը խնդրեր է շատ նպաստաւոր
պայմաններով :

— Երկրագործական Դրամատան կող-
մանէ 1000 ոսկւոյ եգիպտացորենի և
բամպակի լաւագոյն հունտեր ապստըր-
ուած են յԱմբրիկա , գաւառաց մէջ
բաշխուելու համար :

— Անգլիոյ Արտաքին գործոց նախա-
րար՝ Ռոզպէրի Լորտին մայրը երեքշաբ-
թիէն ի վեր մայրաքաղաքս կը գտնուի :

— Ելմտական գանձուն՝ մինչև 1299
երմտական տարւոյն՝ վերջերը պարտք
ունեցողները , մինչև 1308ի վերջը կամ
հարիւրին հարիւր Թապիլիյէի արժէ-
թուղթ և կամ հարիւրին 25 հնչուն

դրամ տալով փակելու են իրենց հաշիւը :

— Գերմանական նորընտիր դեսպանը
մայրաքաղաքս ժամանեց :

— Զմիւռնիոյ Աֆիօն-Գարահիսարի
և Սելանիկի մէջ անձրեւներն սկսած են
տեղալ :

— Շերիի դատարանաց կողմէ պատ-
րաստուած և քաղաքային դատարանաց
ներկայացուած փոխանորդագիրք ևս
իրր նօտարներէ վաւերացուած պիտի
ընդունուին :

— Զմիւռնիոյ Պուճա անուն տեղն
եօթը գինեալ աւազակներ շահատակու-
թիւններ կատարելով փախեր են , այլ
սակայն ոստիկանք ետևնուն հասնելով ,
մին սպաննուած և մին ալ ողջ կը ձեռ-
բակալեն : Մնացեալք կը յաջողին փախիլ :

— Կարնոյ նահանգին այլ և այլ կող-
մերն անձրեւ տեղացած չլինելով , սոյլ
ծագած է :

— Մենքեդէի (Այտըն) Միլաս գաւա-
ռակին մէջ գերեզման մը փորուած մի-
ջոցին ոսկի դրամներ գտնուեր են :

— Ի Պրուսա շերտաբոյձներու քըն-
նութեան մէջ յաջողակ հանդիսացողնե-
րուն վկայականք բաշխուեր են Հանրա-
յին Պարտուց վարչութեան կողմանէ :

— Թնդանօթարմնի հրացանի գործա-
րանը բարեօրէնու համար գերմանացի
վարպետ մը կը բերուի :

— Մուսուլի Փրանսական հիւպատոսը,
որ գիտուն մ'է , քաղաքին չընկալքը
պեղումներ կատարելով , կարեւոր հնու-
թիւններ երևան հաներ է :

— Հանգստեան քոչակ որոշուած է
5666 զրուշ Ատանայի նախորդ կուսա-
կալ Շաքիր փաշայի , 1666 զրուշ Խուճ-
սի նախորդ կառավարիչ Ֆէրիտ փաշայի :

— Զմիւռնիոյ մէջ խոզկաղնի բերքը
գոհացուցիչ է , այլ ձիթապտուղինը ոչ
այնչափ :

— Մախսուսէի գործակալք այսուհե-
տեւ ամսաթուղի տեղ հասութիւց վրայ
հարիւրին որոշեալ գումար մը պիտի
ստանան : Կ. Պօլսոյ գործակալ անուա-
նեցաւ Մկրտիչ էֆէնտի :

— Պենկազի սովեւոց 10.000 ոսկի շը-
նորհած է Վեհ. Սուլթանը :

— Զմիւռնիոյ Խըտմէք լրագրոյ արտօ-
նատէր՝ Ահմէտ Ճէլատէթ պէյի արտօ-
նութիւն տրուած է հրատարակելու Բեն-
պիք թիճաքէք անուն լրագիր մը , որ
երկրագործական ու Դրամական նիւթեր
պիտի պարունակէ :

— Գանտիոյ (Կրէտէ) մէջ ալ իրաքիօ
անուամբ Առեւտրական ու երկրագոր-
ծական շարաթաթերթ մը հրատարակե-
լու արտօնութիւն տրուած է :

— Կաղանիոյ երկաթուղւոյ գծին բա-
ցումը դեկտեմբեր 3ին պիտի կատարուի :

— Պերուքի մէջ քստ սովորութեան այս
աշնան ևս տանկ ծագեր է :

—Աղքատ հիւանդաց ու քարանձի-
նա սպասողներու համար մինչև ցարդ
261.223 զրուշ հանգանակուեր է :

—Պանոսմայէն Գօնիա երկաթուղւոյ
գծի մը շինութեան համար արտօնու-
թիւն խնդրած է Այտընի երկաթուղւոյ
ընկերութիւնը :

—Հանքաց և անտառաց եկամուտ-
ներն ընդհանուր հասոյթից չխառնուե-
լով, առանձին ու ուղղակի պիտի դըր-
կուին Հանքաց և Անտառաց վարչու-
թեանի :

—Ներքին մաքսատուրքը ջնջելու հա-
մար կանոնադիր մը պատրաստուած է ,
որ օտար տէրութեանց հետ առևտրա-
կան դաշնագրոց կնքուին յետոյ պիտի
գործադրուի :

—Միտիլլիի Վասիլիքօ գիւղին Յու-
նաց եկեղեցին պատկերի մը առջև վառ-
ուած մոմի մը պատճառաւ այրեր է :

—Ալաշիհի (Զմիւռնիա) և Գոն-
եայի մէկ քանի գիւղերուն մէջ երկրա-
շարժի ցնցումներ զգացուեր են անցեալ
շաբթու :

—Դերջան գաւառակի քանի մը գիւ-
ղերուն վրայ յարձակելով ինչ ինչ ոճիր-
ներ գործած են Բղեցիք ոմանք : Հարկ
եղած միջոցներն ձեռք առնուած են
զանոնք ձերբակալելու համար :

—Եգիպտոսի Հանրային Պարտուց
ներկայ վեցամսէին հասոյթք 171.500
ոսկի աւելի եղած են :

—Պրուսայի Երկրագործական վար-
ժարանին աւելցեր 60 աշակերտի հա-
մար նոր շէնք մ'ալ պիտի կառուցուի
2000 ոսկի ծախսը :

—Եւսթայի առջև անցեալ շաբթու
25 հոգի պարունակող նաւակ մը փո-
թորկի բռնուելով ընկղմեր է : 12 ուղե-
ւորք խեղդուեր են :

—Վոսթրի տակէն խողովակաձեւ
կամուրջով մը եւրոպական և ասիական
երկաթուղիները միացնելու ծրագիր մը
ներկայացուած է կառավարութեան :

—Կիլիկի մէջ պաճարախտ ծագեր է :

—Հնտախտը կը շարունակէ դարձ-
եալ զրադեցնել միտքերը, նամանաւանդ
Թուրքիոյ մէջ : Կարնոյ նահանգին մէջ
ևս քան զևս կը ճարակի, և Տրապիզոնի
մէջ նորէն երեւան ելած է, առջինէն
աւելի սաստկապէս, ինչպէս նաև ի Բա-
րերդ : Այս առթիւ Տրապիզոն-Օրտու
երկարող Սեւ ծովու Օսմանեան ծովեզ-
րէն եկող նաւերը դարձեալ տասնօրեայ
քարանձինայի պիտի ենթարկուին ի
Սինոպ : Բժշկական յանձնաժողով մը պի-
տի զրկուի Տրապիզոն՝ տեղւոյն վրայ քըն-
նելու համար հնտախտի ծագման ու ծա-
ւալման պատճառները և տնօրինել հարկ
եղած զգուշութիւնները : Հնտախտը Նե-
րպիոյ կողմէն աւելի եւս մօտեցած է

մեզ, որովհետև Սերպիոյ մէջ հաստատ-
ուած է անոր գոյութիւնը : Պուլկարիա
իւր սերպիական սահմանագիծոյն վրայ
զինուորական շղթայ մը և 11 օրուան
քարանձինա հաստատած է : Պուլկարիա-
յէն մայրաքաղաքս բերուած ոչխարք
քննութեան պիտի ենթարկուին ի Մաք-
րիքէոյ :

Մ Տ Ա Մ Ո Ի Թ Ի Ի Ն Ք

—Մարմնոյն տոկունութիւնն ու գե-
ղեցկութիւնը մարդկային էակի կենաց
վրայ մեծ ազդեցութիւն ունին :

—Բարւոյն սէրը, բնածին տաղանդն
այն բաներն են որք զմեզ աւելի Աստ-
ուածութեան կը մօտեցնեն :

—Չարագործութիւնք՝ մարդկային
գոյութեան ծանր հարուած մը կուտան,
վասն զի երկար ժամանակ կամ առ յա-
ւէտ անընդմիջաբար կը խլեն մեզմէ մեր
յարգանքը :

—Տարաբաղդն իւր թշուառութեան,
անուանարկութեան, համբաւի աղարտման
պահուն սիրովեւ, չարեաց փոխարէն բա-
րիք գործել, իւր նմանեաց օգնելու հա-
մար կեանքն ի վտանգի դնել, անկեա-
լին ձեռք կարկառել, ահա՛ այն վսեմ
բաներն, որք մարդուս խիղճն հանդարտ
ու կեանքն ալ բարեբաստիկ կ'ընեն :

—Բարեկամութեան ճամբուն վրայ
խոտ մի բուսցնէք :

—Բարեկամութիւնը հոգի մ'է որ եր-
կու մարմիններ ունի, սիրտ մը՝ որ եր-
կու հոգիներ ունի :

ԱՐԻՍՏՈՏԵԼ

—Անձնասիրութիւնը փքուցուածույց
օգնապարիկ մ'է որ ամպրոպներ կը յա-
րուցանէ՝ եթէ մէկէ մը խայթուի :

ՎՈԼԹԵՐ

—Ուշադրութիւնը յիշողութեան գը-
րոցն է :

—Արկածից, փորձանաց ու անձկու-
թեանց մէջ միայն կը ճանչեմք մեր ճշշ-
մարիտ բարեկամը :

ՈՐԻՈՆ

Գիւլիքտ եւ գիւղացի

Գէլլէրտ՝ գերման նշանաւոր առա-
կախօսը կը բնակէր ի Լայպցիկ : Ձմրան
սկզբնաւորութեան մը օր, մինչ Գէլլէրտ
իւր դրան առաջ կանգնած էր՝ գիւղա-
ցի մը՝ մի սայլ վառելիք փայտ ձգած
առջին, կը մերձենայ նմա և կը խնդրէ
խմանալ՝ թէ ինքն է այն պարոնը, որ կը
յօրինէ ա՛յնքան զմայլիչ առակներ :

— « Զճմարիտ է, կը պատասխանէ
Գէլլէրտ համեստօրէն, թէ առակներ կը
գրեմ : » Նոյնհետայն գեղջուկը կ'աղաչէ

զնա թախանձագին՝ ընդունիլ այդ սայ-
լաբարձ փայտն իբր դոյզն մի նշան ե-
րախտագիտութեան այն հաճոյքին, զոր
նմա իւր առակներու ընթերցումը կը
պատճառէ :

Իմ դէմքը կը պատկանի՝ իմ տանտիկնոջ

Մի պաշտօնեայ կը դիմէ իւր գլխա-
ւորին՝ շնչին ոռնկին յաւելումը խնդրե-
լու : « Տէր իմ, կը կրկնէ նա, ահա կը
մեռնիմ անօթութենէ : միթէ ա՛յս է Ձեր
Ազնուութեան կամքը :

—« Բայց, Պարոն, կը պատասխանէ
մեծաւորը՝ նորա լեցուն ու կարմիր դէմ-
քը դիտելով, ձեր դէմքը բոլորովին հա-
կառակը կը վկայէ : »

« Ո՛հ, տէր իմ, կը գոչէ պաշտօնեայն
միամտաբար, այս դէմքն ինձ չպատկա-
նիր, այլ իմ տանտիկնոջ, զոր ինձ փոխ
տուած է վեց ամսէ ի վեր : »

ԱՊՈԼՈՆ

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Գ. Զ. ի Զմիւռնիա կամ ի Փարիզ .—
Ձեր նամակը ժամանակին ստացած եմք՝
Ձեր յիշած աշխատասիրութենէն նմոյշ-
ներով : Ծաղիկի մէջ չկրնար հրատարակ-
ուիլ իւր ընդարձակութեան պատճա-
ռաւ . առանձին գիրք կարելի է ընել՝
եթէ կամենաք Ձեր հաշուոյն հրատարա-
կութիւնը յանձնարարել :

ԱՌՈՂՋԱՐԱՆԱԿԱՆ ԵՒ ԲԺՇԿԱԿԱՆ
ՄԱՐՄՆԱՄԱՐՁՈՒԹԻՒՆ, առանց գործի-
քի, արանց, կանանց եւ տղայոց, 45
պատկերով : Հեղինակն է Բժիշկ Շրէբեր :
Փորձեցէ՛ք և վստահ եղի՛ք, որ առողջ
և կայտառ պիտի լինիք : Կը բուժէ կուրծ-
քի, շնչարգելութեան, գլխի պտոյտի
կամ ցաւի, նոր սկսած թոքախտի, ան-
մարսողութեան, թուլութեան, մաղձո-
տութեան, ջղային ցնցողական ախտի,
թանջքի, երազափորձութեան, մկա-
նունքներու անդամալուծութեան, ձե-
ռաց կարկամութեան, որովայնի, և ըն. հի-
ւանդութիւնները, եթէ գրքիս հեղինակ
գերմանացի բժշկին պատուէրները ճշգիւ
գործադրէք : Կ'ստացուի միայն 5 դրուշով :

Ա Ր Ժ Է Ք Դ Ր Ա Մ Ո Ց

Ամ. լիւան 100 զըշէն

Մեծիակէ	407	Վեցնոց	104
Քաւարդ մէծիւ	106	Բաւիշ քօլ	90
Մանր մէծիւ	101	Կարդէոն	87 30
Մեթալիք	98	Գրիմից	54 20
Հինգնոց	404	Անգլ. լիւան	140 44

Մանէթ թղթադրամ 9 22

Գծնօրիւ	23 37	Բաւ. երկ.	93
Թաշմիլ. Օմ.	82 35	Թաւալիք	48

ԵՏՐՈՒՐԵՐԸ ՆՈՐ ՈՐՁՆԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Քանի մը ամիս առաջ Հանդես Ամսօր-
եայի (Փետր. էջ 54) մէջ կարդացինք թէ,
Վեննայի Համալսարանին ուսուցչապետ-
ներէն Քրալ՝ մեծ գիւտ մ'ըրած է «Ակ-
րամի ազգային Թանգարանին մէկ մու-
միայի վրայ ետրուակելէն արձանագրու-
թեամբ ի պատատանաց երէզներ իւրոյ
հանելով», որուն համար այն կարծիքն
ունէր «թէ մումիան պատատողն՝ այն օ-
տար երէզն իրեւ աւելորդ կտաւ գոր-
ծածած էր, առանց միտ դնելու բնագ-
րին»։ Այն ժամանակ մեք ևս նոյն թեր-
թին ապրիլի ամսաթուոյն մէջ յայտնե-
ցինք մեր խոնարհ կարծիքն, և այսպէս
վերջացուցինք. «Արդեօք կարելի չէ՞ Ը-
սել թէ Ակրամի յիշեալ մումիան յեզրի-
տոս վախճանեալ ետրուրացի իշխանի մը
լինի, և իբրեւ աւելորդ կտաւ գործած-
եալ» պատատանաց երէզներն և անոնց
վրայի գրերն մասնաւոր նշանակութեամբ
գործածած լինին, ինչպէս սովոր էին Ը-
նել Եգիպտացիք»։ Արդ, Ֆրանսայի Ար-
ձանագրութեանց և Գեղեցիկ դպրու-
թեանց նստերէ միոյն մէջ Ժորժ Պէրրո-
յին այդ երէզներու մասին յայտնած մէկ
կարծիքը բազմաթիւ մերոյն հետ, ա-
ւելի հաստատուեցանք. վասն զի նոյն
գիտնականը կ'ընդունի թէ, յԱղէքսանդ-
րիա հաստատեալ ի մէջ բազմաթիւ օտար
գաղթականութեանց՝ կրնայ ետրուրական
գաղթականութիւն մ'ալ գտնուիլ, ուս-
տի ձեռագիրը պիտի պատկանի նոյն
գաղթականութեան։ Եւ որովհետեւ մեծ
եգիպտաբան Մասպերօ կը հաստատէ թէ
այն պատառն որուն վրայ կը գտնուի
յիշատակարանն, եգիպտական արտադ-
րութիւն է, կը հետեցունէ թէ գրու-
թիւնն ալ նոյն իսկ եգիպտոսի մէջ ե-
ղած է։

Արեւմտեան, կը պնդեմք թէ յիշեալ մու-
միան պատատող երէզներուն ետրուակե-
րէն արձանագրութիւններն ունին իրենց
ՄԱՍՆԱԽՈՐ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ։

Ոյժմ նոյն ետրուրական յիշատակա-
րանին վրայ կ'աշխատի հռչակաւորն
Սոփուս Բուգգէ, որ քիչ օրէն պիտի
հրատարակէ իւր ուսումնասիրութեանց
արդիւնքն։ — Սպասեմք։

Կ. Յ. ՊԱՍՄԱՃԵԱՆ

ԶԲՕՍԱՆՔ

Բոլոր դիմագծերուն մեջ ո՞րն է այն
որ՝ մեկուսի ինչ բնութեան տեք լինելը կը
կը յայտնէ։ — Ապահովապէս բերանն է,
Ստուգիւ, աչաց մէջ կը տեսնուին մաս-
նաւորապէս ուշիմութիւնը և կորովամը-
տութիւնը, որոնք բնաւորութեան հետ

յարարեցութիւն չունին բնաւ։ Քիթը
դէմքին կուտայ վայելչութիւն՝ եթէ ըստ
ամենայնի կանոնաւոր լինի, և տեսակ
մը հետեւակութիւն՝ եթէ կարճ, հաստ ու
տափակ լինի։ Բայց բերանին ձեւը, շըր-
թանց առաւել կամ նուազ շարժնութիւ-
նը, հաստութիւնը, անոնց կցուածնե-
րուն փափկութիւնը կը յայտնեն մանա-
ւանդ մէկու մը նկարագիրը։ Բարակ և
իրարու շատ մօտեցած շրթունք նշան են
խոհականութեան, չափաւորութեան,
յաճախ ծածկամտութեան. մսեղ շրթունք
կը ցուցնեն ցանկութիւն, բայց միևնոյն
ատեն անկեղծութիւն, բարեմտութիւն։
Եթէ շրթանց անկիւնը բարակ լինի՝ կը
յայտնեն չարամտութիւն, չարածիրու-
թիւն։ Քիչ կը պատահի որ շատախօսնե-
րուն բերանը պզտիկ լինի. ատենաբան-
ներուն, խօսելու դիւրութիւն ունեցող-
ներուն շրթունք գրեթէ միշտ մեծ կը
լինին։ Զգուշացէք այն շրթունքներէն
որ՝ խօսակցութեան միջոցին՝ մէկէն ի մէկ
կը սնդին։ Զգուշացէք այն շրթներէն որ
յանկարծական բարկութեան մ'ազդեցու-
թեան տակ կը տփուեն։

Ո՞րն է առն ճախապատիւ յատկու-
թիւնը։ — Կորովն է, արութիւնն է, զոր
պէտք չէ չփոթել քաջասրտութեան հետ։
Կորովն հաստատուն վիճակ մը կը ցու-
ցնէ, որ կայուն մասն կը կազմէ մէկու
մը նկարագրին. քաջասրտութիւնն պա-
տահական բան մ'է, բոլորովին ներքին
կորովին արտաքին հետեւանքն։ Կորովն
է, արութիւնն է որ մասնաւոր առաւել-
ութիւն մը կուտայ առն և թոյլ կու-
տայ նմա՝ շատ պարագայներու մէջ՝ ցու-
ցնել այն բարոյական ու ֆիզիքական
գերազանցութիւնն որոյ այնքան նախան-
ձախնդիր է զօրաւոր սեռն։

(Թարգմ.) Թ. Թ. Հ.

Պ Ի Տ Ա Ն Ի Խ Ր Ա Տ Ն Ե Ր

Փայլ ճերմակեղիւնաց. — Ծոհը (գօլա)
տաքցուցած ժամանակ, աղէկ տեսակ
մոմի գաւազանով մը խառնեցէք զայն,
որպէս զի ճարպիտէն (stearine) մաս մը
հալի ու շոհին հետ խառնուի։ Երբ շո-
հոմութիւն ձեւակերպէն այս բաղադրու-
թեամբ թրմէք և տաք արդուկ մ'ալ
վրան պտտցունէք, պիտի տեսնէք որ
խիստ ողորկ փայլունութիւն մը ստա-
ցեր է։

Մէկ լիտր շոհի համար կը բաւէ չորս
կամ հինգ հարիւրորդամէթր մաս՝ մոմի
գաւազանէն։

Դիմաց ղեկ բլծեր. — Յետագայ դե-
ղատարազը պատրաստեցէք՝ գործածելու
համար ընդդէմ երեսի այն շէկ բծերուն

որք երբեմն ի յայտ կուգան, անշնորհ-
ցընելով կնային քնքուշ դիմագծութիւնը։
Հուսամ (լավանտա) ի մուգ 25 կրամ
Կիտրոն (աղած-գալուներ) 6 »
Սւրճոլ 85 »
Ջուր 86 »
Քացախ 600 »
Լեմոնի քամուք 150 »

Սոյն խառնուրդով սրեցէք այդ ա-
րատներն։

Կրակը մարեյու հնարք. — Տնկաղի
(potasse) լուծալիով կրնամք կրակը
վայրկենաբար շիջուցանել։ Պէտք է քիչ
մը տաք ջուրի մէջ 125 կրամ բոթաս
հալեցնել ու յետոյ ջրոյ դոյլի մը մէջ լե-
ցընել։ Միևնոյն արդիւնքը կրնամք ու-
նենալ, եթէ ջեռոցին մէջ բուռ մը ծը-
ծումը նետեմք։

Գարիկ (կ'օգտարուճըղը). — Սոյն
պալարանման ուռոյցը կ'երևի աչաց կո-
պերէն միոյն եզրն՝ այրուքով և մար-
մալմամբ։ Քիչ ատենի մէջ ի յայտ կու-
գայ կարմիր ու կարծր կէտ մը՝ գարիի
հատիկի չափով. այս վիճակին մէջ ար-
տեւանանց շրջապատը ներս փախածի
պէս կ'երեւին։

Յաւն ընդհանրապէս այնքան սաստիկ
չլինիր. եթէ աչքը գոց մնայ՝ այն ատեն
խօստուքը կը քիչնայ, իսկ մթութեան
մէջ ա'լ աւելի կը նուազի։

Փշտիքն երթալով կը մեծցունէ իւր
ծաւալն, ունեցքին ծայրը կ'սկսի ճերմը-
կիլ. դէպ ի չորրորդ կամ հինգերորդ
օրը կը բացուի, և դուրս կուտայ արիւ-
նախառն թարախ և մոլամիս (bour-
billon). այնուհետեւ ցուր կ'անհետի բո-
լորովին։

Անոնք որ գարիի հանեն, բնաւ չյոգ-
նեցընելով իրենց ականդիքն՝ պարտին
զայն կակղիչ լոգալերով լուալ և պզտի
ծեփելիքներ դնել հացի միջուկով ու կա-
թով կամ եփուած գորտախնձորով
(reINETTE) շինուած։ Վայրի հազարի
(laitue) խաշած տերեւներն ալ ծեփե-
լիքի տեղ կրնան ծառայել։

Վրձիկները լուանալ. — Տաք ջրով
լեցուն սկահակի մը մէջ հալեցուցէք օշ-
նանի բնածխատ՝ ընկուզի մեծութեամբ՝
կէս լիտր ջրոյ համար։ Այտուտած վրձի-
կին ստեւը թաթխեցէք այդ ջուրին մէջ,
ջանալով չթրջել խոզանակին կոթն ու
թիկունքն. այս գործողութիւնը կրկնե-
ցէք՝ մինչև որ մազերը մաքրուած երե-
ւին. ապա վրձինը պաղ ջրով ցայելով՝
ուժգնապէս ցնցեցէք և կոթն ու թի-
կունքն սրեցէք դաստառակով։ Պէտք չէ
ստեւն ալ չորցնել, այլ խոզանակն ա-
րեւուն գրէք կամ կրակին ոչ այնքան
մօտ բռնեցէք։

Թարգ. Թ. ԼԱՊՃԸՆՃԵԱՆ

ՄԻՔԱՅԷԼ ԱԼԼԱՀՎԵՐՏԵԱՆ

Թեհրանում խոշորացող վախճանումած գլխավոր երկրաչափ Միքայել Ալլահվերդեանի մասին մեզ հետեւեալն են գրում. — «Անգլիական ծառայութեան մէջ եղող մագիստրոս հայազգի երիտասարդ Միքայել Ալլահվերդեանցն իւր արտասովոր աշխատութեամբ, տոկոսութեամբ և հաստատուն կամքով անգլիական գիտական աշխարհի ուշադրութիւնը դարձրած էր իւր վրայ: Հանգուցեալը դուրս գալով Շուշու արքունական չորեքդասեան դպրոցի Գ. դասարանից, ուղևորւում է Անգլիա առանց նեցուկի և պաշտպանի. այնտեղ մի քանի ամիս յետոյ մտնելով Վիքտորիա բարձրագոյն դպրոցը, ուսանում է իւր սեպհական ձեռքով վաստակած փողով: Վերջում քուէի դրուելով, Քէմբրիջի համալսարանի ինժեներական մասնաժողովի խորհրդի ամենապատուաւոր անդամ է ընտրուում 365 ձայնի ահագին առաւելութեամբ: Տարիներից ի վեր երիտասարդական եռանդով կուի մղելով հազար ու մի դժուարութիւնների դէմ, ուսումն աւարտում է պատուանշաններով, մրցանակով, որպէս ամենաառաջնակարգ ուսանող: Այստեղ առաջ եմ բերում պարոն տեղեկաբերի խօսքերը սրբազան գիտնականներին ուղղած. «Հայազն Միքայել Ալլահվերդեանը յայտնուել է որպէս ամենաառաջնակարգ ուսանող. չեմ կարծում, որ այսուհետեւ այդպիսի մի աշխատասէր ուսանող էլ ունենալու լինիք. համալսարանը նրանից գիտութեան մէջ մի պարծանք է սպասում: Յետոյ էլ այսպէս է գրում: «Քաղաքային երկրաչափ անուան տակ գործող Միքայել Ալլահվերդեանցն անցաւ պրոֆեսորութեան քննութիւնը ամենափայլուն կերպով: Հանգուցեալը գնալով Պարսկաստանի խորքերը և ամենավտանգաւոր տեղերը, շատ և շատ հանքերի ու նաւթի հետքեր է գտնում. այդ հանքերից, որոնց մշակելու արտօնութիւնն ստացած են հեռատես անգլիացիք, հաշուով մօտաւորապէս 20 միլիոն բուրձի պիտի ստացուի: Միքայելը մի քանի տարի էր, որ կեանքի մէջ էր մտել արդարեւ տեղեկաբերի տաժած յոյսերը կ'արդարացնէր, եթէ անակընկալ մահը վերջ չէնէր նրա կեանքին»:

(ՆՈՐ-ԴԱՐ)

ԻՆՉՊԷՍ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԸ ԿԸ ՏԱՌԱՊԻՆ

Սրտառուջ տեսարաններէն մին ալ անասնոց ցաւի դիմանալն է: Առնենք՝ օրինակի համար՝ ձիերը պատերազմին մէջ: Երբ առաջին վէրքն ստանան, բը-

նաւ ձայն չեն հաներ: Երկար ժամանակ զարմանալի կերպով լռիկ մնալի ցաւ կը քաշեն, և եթէ գիշեր ատեն պատերազմի դաշտէն հեծութիւններ, հառաչանքներ կ'իմանաք, պատճառը իրենց առանձնութիւնն է, մարդոց ընկերութեան կորուստն է որ բացարձակապէս անհրաժեշտ կ'երեւի ընտանի անասնոց իբր սփոփանք մը:

Շունը իւր կոտրած սրունքը օրերով կը կրէ խնամով առանց տրտունջի:

Վատուն, եթէ մէկը ծեծած է զայն քարով կամ փայտով, կամ թակարդի մը մէջ բռնուած ուրիշ ի զուր կը ջանայ դուրս ելնել, կը կծկտի անկիւն մը և լռութեամբ կը կրէ իւր ցաւը որուն մենք չպիտի կրնայինք հանդուրժել:

Ոչխարը և ուրիշ արջառներ մաւաճառին դանակին միտիւր կ'զգան առանց ձայն մը հանելու, և նոյն իսկ մեր ընտանի հաւերը բուռն ցաւեր կը քաշեն առանց գանգատի:

Վայրի աղանձին, մահացու կերպիւ վիրաւորուած, կը թռչի հեռուն, ճիւղ մը, և մինչ կը մեռնի՝ միայն արեան կաթիլներէն յառաջ եկած՝ տերեւներու թըփըրտիւնն է որ կը խանգարէ լռութիւնը:

Վիրաւորեալ եղջերուն կը փութայ դէպ ի թաւուտ պրակ մը ու հոն վըտագին համակերպութեամբ մը մահուան կ'սպասէ:

Արծիւը, զարնուած օդին մէջ, մինչև վերջին շունչը կը մաքառի մահացու հարուածներու: Ոչ ցաւի հեծեծանք մը և ոչ ալ հառաչ մը կը լսուի և յանդուգն նայուածքը երբէք չնուաղիր իւր աչքերէն, մինչև որ փակուին՝ մէկ մ'ալ չը բացուելու պայմանաւ:

Թարգմ. Ս. Բ.

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ Ք

Հարիւրամեայ մը. — Վերջերս Իէռի մէջ մեռաւ հայր Քարթինեի որ 1791 Սեպտ. 11ին ծնած էր. Քարթինեի Թըրաֆալկարի յաղթութեան վերջին վկան էր, յայնժամ որ ծովապետն Նէլսոն և Պոնաբարդ ճակատեցան: Քարթինեի թէև փոքրահասակ՝ գերի վարեցաւ. ազատութիւն ստանալէ վերջ ժամանակ մը պանդոկապան եղաւ, և երբ ծերացաւ, իւր տարեկան թոշակով համեստ կեանք մը կը վարէր. թէև աղքատ, սակայն իւր 101 տարիներն բոլոր միլիոնատէրերն մոռցնել կուտան:

Կետ ձկան սպառումն. — Կը վախցուի որ որսորդաց անյագ շահասիրութիւնը կէտ ձկան ցեղը պիտի ջնջէ խապաւ: Մեծն Ալէքսանդրի ժամանակ, մինչև իսկ Միջերկրական ծովուն մէջ

մեծամեծ կէտեր կը տեսնուէին. այժմ հիւսիսային կիսագնդի ովկիանոսաց մէջ իսկ շատ քիչ կը գտնուին, և եղածներն ալ կատաղօրէն կը ջարդուին: 1886ին Նորվեգեան եզերաց վրայ 1269 կէտ ձուկեր բռնուեցան, որք 1,197,000, քրօնէր արժեցին (1 քրօնէր հաւասար է 1 Փր. 40 սանթիմի), 87ին այս թիւն իջաւ 884ի, 88ին՝ 755ի, 89ին՝ 635ի և հետզհետէ աւելի նուազ:

Եճֆուհեցայի կոտորածը. — 1889-90 և 91-92 տարիներու էնֆուհեցա հիւանդութեան ահաբեկ կոտորածն ամենուն ծանօթ է: Տօքթ. Փրուսթ բըժշկական Ակադէմիային 89-90ի էնֆուհեցային պատմութիւնն ընկելով ըսած է թէ այս հիւանդութենէ 40,000 մարդիկ մեռան, և որովհետեւ այս պատճառաւ ծնունդը 27,000 նուազ էին, հետեւաբար 67,000 անձանց կորուստ եղաւ: Ծերունիք աւելի շատ մեռան, սովորական միջին թիւէն եռապատիկ աւելի. չարահասներունը՝ կրկին. նաև էրիկ մարդիկ կիներէն աւելի զոհ եղած են: Դեկտեմբերի մէջ ամբողջ Փրանսական բանակին եօթներորդ մասը, այսինքն 60 հազար զինուորք էնֆուհեցայէ վարակուած էին, իսկ Յունուարի մէջ գրէթէ կէսը:

Լապտերներու ծուխը. — Ամենքս գիտենք թէ որքան անտանելի և հակառողջական է այն ծուխը զոր երբեմն մեր լապտերք կ'արձակեն. եթէ պատրոյզը ժամ մը բարկ քացալի մէջ թողուի և լաւ չորցնելէն վերջ գործածեմք, այս անպատեհութիւնը կը վերանայ:

Ելեկտրականութեամբ ատամնաբուժութիւն. — Ելեկտրականութիւնն՝ որ գիտութեան նորածին մի զաւակը կրնայ համարուիլ, մեծամեծ յառաջդիմութիւններ կ'ընէ. ատամնաբուժութեան մէջ ալ փայլուն դեր մը կը կատարէ: Դարմանելի ակռան լուսաւորելու համար բերնին մէջ հրաշէկ փոքրիկ լապտեր մը կը դրուի. ակռան կապարով պատեղու համար գործիք մը գործածուի որ ելեկտրական շարժիչ զօրութեամբ, մի վայրկենի մէջ 6,000 անգամ կրնայ դառնալ. ելեկտրական հոսանքի և ծովային աղի գործածութեամբ ակռան սառտալի նման կը ճերմկնայ. խարերի ակռային մէջ բլաթինի կտոր մը կը մոցեն և զայն ելեկտրական հոսանքով հրաշէկ ընկելով՝ ակռան կը խարի:

Ջատկական հաւկիթներ. — Չը կարծենք թէ սկզբնապէս Գրիստոնէական սովորութիւն մ'է Ջատկի առթիւ հաւկիթներ տալ ու զրկել: Ի հնումն, Ասիոյ և Եւրոպիոյ երկրագործ ժողովուրդք նոր տարւոյ առթիւ նոյն սովորութիւնը կը կատարէին: Կաթոլիկ եկեղեցին այս

ՅԱՆՉՆԱՐԱՐԵԼԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆՔ

**ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ ՎՐԱՅՐ և ԸՆԿ. Ղա-
լաթիա, Գոմիսիոն խանի տակ, Թիւ 23:
ՄԱՐՆԱՃԻԻՂ նոյնթղթավաճառատան
Պահէ-Գարու, ճէլալ պէյ խանի տակ,
Թիւ 18:**

**ՍՏԵՓԱՆ ՉԱՎՈՒՇԵԱՆ. Գործատուն և
վաճառատուն տեղական կերպասուց.
գիմացկուն ապրանք. Եւրոպական ճա-
շակաւ. Պապը Ալի ճատուէսի. Պարս-
կական դեղանաւանան գիմաց, Թիւ 48:**

**ՐԱՄ և ԿԻԻՄԻՆՇԵԱՆ. Հոտաւէտ
նիւթերու և խողանկայ մթերանոց.
Կ. Պոլիս, Էսկի Չապթիյէ ճատուէ,
Թոմսոն խանի գիմաց, Թիւ 7:**

**ՍՏԵՓԱՆ ՄԱՆԿԵԱՆ. ճոխ վաճառատուն
պարզ և չքեղ անձրեւանոցներու ու
արեւանոցներու. Ղալաթիա, Քաման-
տո Պանքային գիմացը, Գոմիսիոն խա-
նին տակը:**

**ԻԵՏԻՍ ՉԱՐԻՖԵԱՆ, Դեղագործ Ի Գուժ-
գարու, Սթասիոն ճատուէսի.— Դե-
ղերու թարմութիւն, դեղագործ խըզ-
ճամիտ և անխարդախ պատրաստու-
թիւն, գնոց չափաւորութիւն, աւա-
ւելութիւններ որոցմով իւր անթիւ յա-
ճախորդաց վստահութիւնը գրաւած է:**

**ՊԵՇԵՐԻԱՆ ԵՂԵՐԲ, Մսավաճառի
կրկին խանութք Ի Կէտիկ-Բաշա և Ի
Գուժ-գարու: Փողոցներուն տեղը և
խանութիւններուն թիւերը չեմք սահմա-
ներ, որովհետեւ հանրածանօթ եղած են
իրենց ուղղամտութեամբը և ապրանաց
ընտրութեամբը:**

**ՄԷՆ ՏԵՍԱԿ ՅԱՆՉՆԱՐԱՐՈՒԹԵԱՆՅՀԱ-
մար դաւառներէն դիմել առ Յովնան
Գ. Փալադաշեան, Կ. Պոլիս, Պահէ
Գարու, Թաշխան. Թիւ 51:**

**ՊԱՇՏՕՆ խնդրող ուսուցիչը կը
հրաւիրուին արձանագրուելու «Ծա-
ղիկ» խմբագրատունը. հոն գիմեղու
են նաև լծէ՝ վարժարանաց և լծէ՝ մաս-
նաւոր դասերու համար ուսուցիչ
միտուողներ:**

**==Ֆրանսերէն, դերմաներէն, Թորքե-
րէն և իտալերէն լեզուաց մասնաւոր դա-
սեր ստանձնելու համար արձանագրուած
են արդէն մի քանի հմուտ և վկայեալ
ուսուցիչք:**

**==Ուսուցիչ մը, հմուտ հայերէն ու
ֆրանսերէն լեզուաց և բաւականին անգ-
լերէնի, ինչպէս և ինչ ինչ կարեւոր ուս-
մանց տարերաց, քաջամուտ եկեղեցա-
կան պարզ (անձայնագիր) և աւանդա-
կան երգեցողութեան և անվրէպ ժամա-
սացութեան, կը փափաքի պաշտօն
ստանձնել մայրաքաղաքիս մէջ կամ Ի
գաւառս:**

**==Ներիտասարդ մը պատրաստ է դա-
սեր ստանձնել անգլիերէնի, բնական
պատմութեան և ընդհանուր աղգաց
պատմութեան:**

**==Ներիտասարդ մը պատրաստ է ըս-
տանձնել օգնական-դաստիարակի պաշ-
տօն:**

FRATELLI GOLDENBERG

ԱՄԵՆԷՆ ՄԵԾ. ԱՄԵՆԷՆ ՀԻՆ. ԱՄԵՆԷՆ ՀԱՄԱՌԱՄԻՈՐ

ՀԱՆԴԵՐՁԵՂԻՆԱՅ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՀԱՆՐԱԾԱՆՕԹ ՀԱՄԱՅՆ ԵՒՐԱԳ. ԹՈՒՐԻՅՈՑ, ԱՍԻԱԿԱՆ ԹՈՒՐԻՅՈՑ ԵՒ ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ

ՖՐԱԹԵԼԼԻ ԿՈՆՏԵՆՊԵՐԿԻ

Այս վաճառատուն կը յանձնարարուի հասարակութեան և ամէն միջման
կրնայ գիմադրել իւր կերպասուց ընտիր յատկութեամբը, պատրաստութեան
տոկունութեամբը, ինչպէս նաեւ հանդերձին գեղեցիկ կտրուածքովը:

ՊԼԱՄԱՌՈՐ ՄԹԵՐԱՆՈՅԹ Ի Կ. ՊՈԼԻՍ

Թիւնէլի քով Թիւ 2, Եւ Բարաքէօյի Կամուրջին գլուխը Թիւ 28

ՄԵՇԱԲԱՆԱԿ ԵՒ ՓՈՐՐԱԲԱՆԱԿ ՎԱՃԱՌՈՒՄՆ

ՄԱՍՆԱՃԻԻՂ

Հռոտոս, Բաւլալ, Ռուսնուք, Զմիւռնիա, Վառնա, Պուրկաս, Փիլիպէ,
Բոր-Սաիտ, Սելանիկ, Սամսոն, Մերսին, Բիոս, Թարսուս, Ատանա, Պէրութ,
Դամասկոս, Տրիպոլիս (Սուրիական), Եաֆա, Աքեա, Ալեքսանտրիա, Գահիրէ,
Էայլն, Էայլն:

«ԾԱՂԻԿ» Ի

ԽՄԲԱԴՐԱՏԱՆ ՄԷՋ ԿԸ ԾԱՆՈՒԻՆ

1. ՄԵՌԵԱԼ ԿԻՆԸ. Հեղինակ Օգթավ

Ֆէյիէ. Թարգ. Մ. Թէլեան. Գին 10 ղշ:

2. ՓՈՒՆԶ ԴԻՏԱԿԱՆ. Գրեց Տօքթ.

Կ. Յ. Փաշայեան. Գին 5 ղշ:

3. ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒ-

ԹԻՒՆ. Գրեց Տօքթ. Է. Բլէման. Թարգ.

Յակոբ Սիսակ. Գին 5 ղշ:

4. ԱՆԴՂԻԵՐԷՆ ԼԵՋՈՒԻ. Քերական-

ութիւն, Տեսական և Գործնական. Աշ-

խատարեաց Յ. Մանգակունի. Գին 3 ղշ:

5. ԲԱՆԱԿԻ ԱՆԿԻՆԻՐԷՆ ԸՆԹԻՐ-

ՅԱՆՈՒԹԷՆ. Բոլորովին նոր և դիւ-

րուսոյց եղանակի վրայ պատրաստուած

Ի Յ. Թ. Հինգէլեանէ. Գին 3 ղշ:

6. ՀԻՄՆԱԿԱՆ ՆՈՐ ԵՂԱՆԱԿ Ֆը-

ռանսերէն Շարադրութեան. Յօրինեց

Յ. Թ. Հինգէլեան. Ա. Տարի՝ 6 ղշ. —

Բ. Տարի 5 ղշուշ:

7. ՏՕՆԱՅՈՅՑ. Բանախօսութիւն Տօք-

թէօր Ալալէրթ Լոնկի. Գին 1 ղշուշ:

8. ԲՆԱԿԱՆ ՊԼԱՄՈՒԹԵԱՆ Առաջին

Տարերք. Թարգմ. Օր. Փ. Գէորգեան. Գին 5 ղշուշ:

9. ՕՍՄՆԵՐԷՆ ԼԵՋՈՒԻ Նոր Քերա-

կան. Ներկասիրեաց Պ. Կարապետեան,

Ուսուցիչ Թորքերէն լեզուի և գեղա-

գրութեան. Գին 50 փարա:

10. ՄԷՇԳ, Եախօտ Խութութիւն Օս-

մանի (5 տետրերէ բաղկացեալ). Պ. Կա-

րապետեան. հատը 30 փարա:

11. ԹՈՒԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐԻ. 2 ղշ:

12. ԻԻՍՈՒ ԻՄԼԱ, Եախօտ Տօղրու

եղանագ ուսուլը. Պ. Կարապետեան. 3 ղշուշ:

13. ԲԷՆԻԻՄԱԻ ԳՐԱԹ ՎԷ ԹԵՐ-

ՃԵՄԷ. Պ. Կարապետեան. 1 1/2 ղշուշ:

ՍԱՄՓՍՈՆ

ԱՃՈՒՄՆ ԵՒ ԵՐԱՐՈՒՄՆ ՄԱՋԵՐՈՒ

Կ. Պոլիս, 15 Մուհարրէմ, և 8 Օգոստ. 1307

Տեաքք Սարաֆեան Եղբարք.

Դեղագործ է Խաֆէ-Ղ

1305 թուականին էր որ Ձեզ հետ մէկ
տեսութեան մէջ՝ նախապէս տեղեակ լի-
նելով արհեստի մէջ Ձեր ունեցած ճար-
տարութեան և լուրջ արուեստասիրու-
թեան՝ խնդրեցի մաղերը երկարող, ա-
ճեցնող և հիւանդ արմատները կենդա-
նացնող պատրաստութիւն մը իմ աղջը-
կանցս համար:

Խոստացաք իւր փորձ Ի մասնաւորի
պատրաստել այդպիսի դեղ մը, պոյմա-
նաւ որ երբեք չպիտի պարունակէր իւր
բաղադրութեան մէջ հակառուջական նիւ-
թեր, և ըստ Ձեր խոստման՝ շրկեցիք ինձ
երեք շիշ սոյն գեղէն:

Արդ՝ ինչպէս յայտնած եմ հրապա-
րական շնորհակալութիւնս 14 Մուհարրէմ
և 7 օգոստ թուականի Սաատէք լրագրոյ
միջոցաւ, նմանապէս սոյն մասնաւոր գը-
րութեամբս կը յայտնեմ խնդակցու-
թիւնս, վասն զի Ձեր պատրաստութիւն
յաջողապէս պակուեցաւ, աճեցնելով,
երկարելով և գեղեցկացնելով աղջկանցս
մաղերը: Եւ այժմ յաւելում լծէ այդ դեղ
չարսունակէր իւր մէջ հակառուջական
նիւթեր, ոյլ և ոյլ պատրաստութեանց
նման: Ընդունեցէ՛ք շնորհակալութիւնս:

Թորգարուի Կայս. Պալատան

պահեստի զօրաց բժիշկ

Պեր խոյանապետ Հիիսէֆին

6-10

ԱՐՏՕՆԱՏԵՐ Ա ՍԱՔԱԵԱՆ

ՏՊԱԳԻ. ՄԻՋՐԱՆ. Յ. ՓԱՓԱԶԵԱՆ

Ի. Պոլիս, Զիւլայիլի խան, Թիւ 18, 19, 21